ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2017

Բովանդակություն

1. Հանրային հեռուստառադիոընկերության համակարգը....3
2. Հանրային հեռուստառադիոընկերության 2016 թվականի գործունեության նպատակներն ու խնդիրները 4
3. «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ....8
4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ 11
5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ....40
6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ 58
7. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ....67
8. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ....79
9. «Մասս մեդիա» կրթական կենտրոն....84

1. Հանրային հեռուստառադիոընկերության համակարգը

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով:

Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ): «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» պետական հիմնարկը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում 2001 թվականի հունիսի 7-ին:

Հեռուստատեսային հաղորդումների արտադրության և հեռարձակման գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հանրային հեռուստաընկերություն), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 4-ի N 592 որոշման համաձայն:

Ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հանրային ռադիոընկերություն), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 661 որոշման համաձայն:

Հանրության բոլոր շերտերի հոգևոր և մշակութային պահանջմունքները բավարարող հաղորդումների արտադրության և հեռարձակման գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 216-Ն որոշման համաձայն:

ՀՀ Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Շիրակի հանրային հեռուստառադիո), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 29-ի N 1312 որոշման համաձայն:

Հանրային հեռուստառադիոընկերության կողմից հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հասարակության տարբեր շերտերի և ոլորտների ներկայացուցիչների կարծիքի ուսումնասիրության գործում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն), որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի N 1401-Ն որոշման համաձայն:

Նշված բաժնետիրական ընկերությունների պետական սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են Հանրային հեռուստառադիոընկերության Խորհրդին:

Հանրային հեռուստառադիոընկերությունը հանդիսանում է Եվրոպական հեռարձակողների միության (European Broadcasting Union - EBU) լիիրավ անդամ: Անդամակցությունը հնարավորություն է ընձեռում Հանրային հեռուստառադիոընկերությանը Հայաստանը ներկայացնել Եվրոպական հեռարձակողների միության կողմից կազմակերպվող մի շարք միջազգային միջոցառումների շրջանակներում (օրինակ՝ «Եվրատեսիլ», «Մանկական եվրատեսիլ» և այլն), ինչպես նաև հեռուստադիտողներին հասանելի դարձնել միջազգային սպորտային և այլ խոշոր միջոցառումները:

2. Հանրային հեռուստառադիոընկերության 2016 թվականի գործունեության նպատակներն ու խնդիրները

2016 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության գործունեության հիմնական նպատակն է եղել հանրային կյանքում իր առանձնահատուկ առաքելության վերահաստատումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտականությունների և լիազորությունների շրջանակներում: Ըստ այդմ, դրվել են հետևյալ **նպատակները.**

- ապահովել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անաչառ, հավաստի, օպերատիվ, համակողմանի, ամբողջական և սպառիչ լուսաբանումը,

- բավարարել հանրության սեռային, տարիքային, սոցիալական, էթնիկական բոլոր խմբերի բարոյական և գեղագիտական պահանջմունքները՝ առաջնորդվելով համամարդկային և ազգային բարձր արժեքների պահպանման և հանրահռչակման սկզբունքով,
- նպաստել հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության, գթասրտության և հանդուրժողականության գաղափարների տարածմանը,
- խթանել հայ ժողովրդի պատմական հիշողության, լեզվի, գրականության, ազգային ինքնության, մշակութային ժառանգության պահպանմանն ու հարատևմանը միտված հանրային ձեռնարկումները՝ ապահովելով դրանց լուսաբանման շարունակական և հարաճուն ընթացքը,
- աջակցել մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը միտված հանրային ձեռնարկումներին՝ երեխաների մեջ ձևավորելով օրինակելի, բարոյական և գեղագիտական արժեքների ընկալման մշակույթ:

Նշված նպատակների իրագործման համար Հանրային հեռուստառադիոընկերությունը 2016 թվականին իր գործունեության հիմքում դրել էր հետևյալ հիմնական **խնդիրները.**

- շարունակել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության տեխնիկական վերազինման և շենք-շինությունների հիմնանորոգման փուլային աշխատանքները,
- թվային տեխնոլոգիաներին անցման միջոցով բարձրացնել հաղորդումների հեռարձակման որակը և ապահովել համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
- պատրաստել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հրատապ խնդիրներին նվիրված այնպիսի հաղորդումներ, որոնք ապահովում են անմիջական կապը լսարանի հետ, արձագանքում են ոչ միայն հանրության կյանքում առկա հայտնի խնդիրներին, այլև հանպատրաստից բարձրացնում են նոր հարցեր և փնտրում ոչ ստանդարտ լուծումներ,
- ավելացնել այն հաղորդումների քանակը, որոնք վերաբերում են հասարակության խոցելի և անպաշտպան խմբերի՝ ծերերի, ծնողազուրկ երեխաների, հսկողությունից դուրս

մնացած դեռահասների, գործազուրկների և հաշմանդամների խնդիրներին, ինչպես նաև հանրության մեջ նրանց նկատմամբ ձևավորել համարժեք և հանդուրժողական վերաբերմունք,

- բոլոր հաղորդումներում սահմանել կենդանի, բայց կանոնական հայերենի գերակայությունը՝ որպես եթերի լեզվական քաղաքականության առանցքային պայման: Իրականացնել ազգային երգի և երաժշտության հանրահռչակումը՝ շարունակելով համապատասխան հաղորդաշարերի և համերգների հեռարձակումն ու պատրաստելով նորերը, ներկայացնել հայ ժողովրդի պատմության ուսանելի և հաղթական դրվագները, բացահայտել պատմության առեղծվածները,
- շարունակել հեռարձակել ՀՀ Ազգային ժողովի, կառավարության, պաշտպանության նախարարության, ոստիկանության գերատեսչական հաղորդումները, զանազան հաղորդումներում պատշաճ առիթներով մեծարել զոհված և ողջ մնացած հերոսներին,
- ցուցադրել բարություն և ընկերասիրություն սերմանող մուլտֆիլմեր, երեխաների մեջ արմատավորել սեփական իրավունքների պաշտպանության և հանրային պատասխանատվության զգացում, ճանաչելի և սիրելի դարձնել հայրենի բնաշխարհն ու նրա մարդկանց,
- մշտապես ուշադրության կենտրոնում պահել հանրության համար կարևոր որոշումների քննարկման և ընդունման ընթացքը,
- Երևանի պետական համալսարանի հետ համատեղ մշակված կրթական ծրագրի շրջանակներում գործող «Մասս մեդիա» կրթական կենտրոնում շարունակել նեղ մասնագիտացված հեռուստատեսային արհեստավարժ կադրերի պատրաստումը,
- մշակել և կիրառել հանրային կարծիքի ուսումնասիրման նորագույն մեթոդներ՝ ավելի արդյունավետ և նպատակային դարձնելով հաղորդումների հասցեականությունն ու ծրագրման աշխատանքները, պահպանել անհրաժեշտ համամասնություն սոցիալական խմբերի խնդիրների լուսաբանման ոլորտում,
- ապահովել օտարերկրյա ֆիլմերի և հաղորդումների կրկնօրինակման և թարգմանության բարձր որակ,
- ընդլայնել հանրային ալիքների հեռարձակման տարածքը՝ հասանելի լինելով Հայաստանի և Արցախի բոլոր անկյուններում, ինչպես նաև եվրոպական երկրներում, Մերձավոր

Արևելքում և Հյուսիսային Ամերիկայում՝ միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները,

- ժամանակակից տեխնիկական լուծումների շնորհիվ մշտապես նորացնել Հանրային հեռուստաընկերության համացանցային կայքը՝ հնարավորություն ընձեռելով Հայաստանի և սփյուռքի հեռուստադիտողներին ուղիղ եթերում բարձր որակով հետևելու Հանրային հեռուստատեսության միջազգային ալիքով հեռարձակվող հաղորդումներին ու լրատվությանը, ինչպես նաև դիտելու արդեն հեռարձակված հաղորդումներն ու փաստագրական ֆիլմերը,
- վերջին 50 տարիների հայաստանյան կարևոր իրադարձություններին վերաբերող արխիվային նյութերի թվայնացման փուլային աշխատանքների նախագծում, որն իր մեջ կներառի արխիվային նյութերի մշակում, թվայնացման աշխատանքներ, քարտարանի ստեղծում և համացանցային կայքէջի միջոցով նյութերի հասանելիության ապահովում:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտները:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված, Հանրային հեռուստառադիոընկերության կողմից իրականացվող ծրագրերը և ընկերությունները, որոնց միջոցով այդ ծրագրերը իրականացվել են:

Աղյուսակ 1

2016 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության կողմից իրականացված ծրագրերը

(հազ. դրամ)

Ծրագրի անվանում	**Ընկերություններ, որոնց միջոցով իրականացվել են ծրագրերը**	**Հաստատված բյուջե**	**Փաստացի օգտագործված**	**Շեղում (+,-)**
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	«Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ (Խորհրդի և նրա աշխատակազմի պահպանման ծախսեր)	128 675.2	124 215.9	4 459.3
Հեռուստատեսային ծառայություններ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	4 734 678.1	4 734 678.1	-

Ծրագրի անվանում	Ընկերություններ, որոնց միջոցով իրականացվել են ծրագրերը	Հաստատված բյուջե	Փաստացի օգտագործված	Շեղում (+,-)
Ռադիո ծառայություններ	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ	785 304.1	785 304.1	-
Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ	«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ	94 646.3	94 646.3	-
Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ	«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ	44 326.2	44 326.2	-
Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ	«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	150 173.7	150 173.7	-
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	200 000.0	200 000.0	-
«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ	70 000.0	70 000.0	-
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	129 860.3	129 860.3	-
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	«Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ (ՊՀ-ի աշխատակազմի աշխատակիցների սոցիալական փաթեթով ապահովում)	1 872.0	1 086.0	786.0
Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ	«Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ (Եվրոպական հեռարձակողների միության անդամակցության վճար)	35 914.5	29 971.4	5 943.1
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	132 601.9	132 601.9	-
Ընդամենը		**6 508 052.3**	**6 496 863.9**	**11 188.4**

3. «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ

Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը հանդիսանում է Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, որի ենթակայության տակ գործում են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային

ռադիոընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ):

Խորհուրդը սահմանում է Ընկերությունների հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալներն ու հեռուստառադիոծրագրերի (ալիքների) քանակը, ծրագրային քաղաքականությունը, ֆինանսական միջոցների օգտագործման կարգն ու ուղղությունները, համակարգում է Ընկերությունների ընթացիկ գործունեությունը և լսում գործադիր տնօրենների հաշվետվությունները, ինչպես նաև հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության աշխատողների կարգավիճակը և պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմաններն ու վարձատրման կարգը:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և նրա աշխատակազմի պահպանումն իրականացնելու նպատակով 2016 թվականին Հանրային հեռուստառադիոընկերությանը «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.01 «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով հատկացվել է 128 675.2 հազ. դրամ, որից 124 215.9 հազ. դրամը ծախսվել է, իսկ 4 459.3 հազ. դրամը՝ տնտեսվել (2016 թվականի բյուջեն՝ ըստ առանձին հոդվածների, ներկայացված է Աղյուսակ 2-ում):

Աղյուսակ 2

2016 թվականի ՀՀ պետական բյուջեից Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և աշխատակազմի պահպանման ծախսերը՝ ըստ հոդվածների

(հազ. դրամ)

Ծախսային հոդվածի անվանումը	Հաստատված բյուջե	Փաստացի օգտագործված	Շեղում (+,-)
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	113 865.4	113 551.3	314.1
Կապի ծառայություններ	2 809.5	1 479.8	1 329.7
Ապահովագրական ծախսեր	120.0	115.3	4.7
Գույքի և սարքավորումների վարձակալություն	3 588.0	3 289.0	299.0
Գործուղումների և շրջագայության ծախսեր	2 833.2	1 187.4	1 645.8
Համակարգչային ծառայություններ	80.0	33.0	47.0
Տեղեկատվական ծառայություններ	800.0	640.0	160.0
Ներկայացուցչական ծախսեր	500.0	154.1	345.9

Ծախսային հոդվածի անվանումը	Հաստատված բյուջե	Փաստացի օգտագործված	Շեղում (+,-)
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	800.0	800.0	-
Գրասենյակային նյութեր և հագուստ	417.1	337.1	80.0
Տրանսպորտային նյութեր	2 764.0	2 539.9	224.1
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	62.0	61.0	1.0
Պարտադիր վճարներ	36.0	28.0	8.0
Ընդամենը	**128 675.2**	**124 215.9**	**4 459.3**

Խորհուրդն իր աշխատակազմի միջոցով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով իրեն ամրագրված լիազորությունների շրջանակներում 2016 թվականին, ինչպես և նախորդ տարիներին, շարունակել է համակարգել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և իր ենթակայության տակ գտնվող մյուս ընկերությունների գործունեությունը:

2016 թվականին Խորհրդի կողմից հաստատվել են Ընկերությունների հեռուստառադիոհաղորդումների թեմատիկ ուղղություններն ու ծավալները և հեռուստառադիոծրագրերի (ալիքների) քանակները, Ընկերությունների 2016 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվները:

Մշակվել է Հանրային հեռուստառադիոընկերության 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

Աշխատանքներ են տարվել ոլորտի միջազգային կառույցների և արտասահմանյան հեռուստաընկերությունների հետ կապերի և փոխհարաբերությունների ընդլայնման ուղղությամբ:

4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2016 թվականին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ Առաջին (ՀՀ տարածքում և Արցախում) և միջազգային (ՀՀ տարածքում և տարածքից դուրս) ալիքներով:

2016 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում և սահմանված պահանջներին համապատասխան պատրաստել և հեռարձակել է տարբեր թեմատիկ ուղղություններով հաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարել հանրության տարբեր շերտերի և սոցիալական խմբերի հեռուստատեսային պահանջմունքները և ապահովել տեղեկացված լինելու նրանց սահմանադրական իրավունքը:

Հեռուստահաղորդումների պատրաստում

Հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2016 թվականի ընթացքում Առաջին և միջազգային ալիքներից յուրաքանչյուրի եթերում հեռարձակվել են 8 766 ժամ հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

Աղյուսակ 3

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)	Միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	624	878
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1 439	2 155
3	Մշակութային	1 787	1 343

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)	Միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
4	Կրթական, մանկապատանեկան	771	682
5	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	779	1 114
6	Մարզական	556	164
7	Երաժշտական	820	1 147
8	Զվարճալի-ժամանցային	1 591	1 021
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	399	262
	Ընդամենը	**8 766**	**8 766**

Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են Գծապատկեր 1-ում և Գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 1. 2016 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)



Գծապատկեր 2. 2016 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)

<u>Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներ</u>

«Առաջին լրատվական»

«Առաջին լրատվական» ծառայության նույնանուն հեռուստահաղորդումն Առաջին ալիքի ամենօրյա գլխավոր լրատվական ծրագիրն է, որը համակողմանիորեն լուսաբանում է օրվա ընթացքում Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող հրատապ և ուշագրավ իրադարձությունները: Բացի «Առաջին լրատվական»-ի երևանյան կենտրոնակայանից, թղթակցություններ են ստացվում ինչպես ՀՀ բոլոր մարզերից, այնպես էլ Արցախից, Ջավախքից, Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Դոնի Ռոստով), Ամերիկայի Միացյալ Նահանգներից (Լոս Անջելես, Վաշինգտոն), Ֆրանսիայից, Գերմանիայից, Լեհաստանից և եվրոպական այլ երկրներից:

«Առաջին լրատվական»-ի կիրակնօրյա թողարկումը 50 րոպեների ընթացքում բազմակողմանիորեն ներկայացնում է շաբաթվա կարևորագույն իրադարձությունները: Բացառիկ ռեպորտաժներով լուսաբանվում են լրատվությամբ ողջ խորությամբ չմեկնաբանված կամ լրահոսից դուրս մնացած սուր անկյունները: Դրանք վերաբերում են այն

իրադարձություններին, որոնք ամբողջ շաբաթ եղել են Հայաստանի ու աշխարհի ուշադրության կենտրոնում, և այն երևույթներին, որոնք այդ օրերին գուցեև բավականաչափ ցցուն չեն եղել, բայց իրենց բովանդակությամբ կամ անլուծելիությամբ հանրության համար հիմնախնդիր են:

«Տեսանկյուն»

«Տեսանկյուն» ամենօրյա հաղորդաշարը օրվա մեկ հրատապ թեման մեկնաբանում է անսպասելի դիտակետից՝ հրապարակախոսական սուր շեշտադրումները համադրելով թեթև և սրամիտ ոճի հետ:

«Խորհրդարան»

Հաղորդաշարը շարժական կայանի օգնությամբ տեսագրում և եթեր է հեռարձակում ՀՀ Ազգային ժողովի քառօրյա նիստերի ընթացքը, որտեղ պատգամավորները և խումբ-խմբակցություններն իրենց հատկացված ժամանակահատվածում հանդես են գալիս հայտարարություններով, բարձրացնում սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ հարցեր:

<u>Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ</u>

«Զինուժ»

Շաբաթական երկու անգամ Հանրային հեռուստաընկերության եթերում է ՀՀ ՊՆ տեղեկատվության վարչության «Զինուժ» ծրագիրը, որը ներկայացնում է բանակի շաբաթվա առօրյան, միջազգային ռազմաքաղաքական շփումները. մարտական հերթապահություն, զորամասային կյանք, զորավարժություններ, զինվորական ճակատագրեր, զինվոր-հրամանատար փոխհարաբերություններ, պատմամշակութային նյութեր, ինչպես նաև անդրադարձ բանակի անցած հերոսական ուղուն:

«Խորհրդարանական շաբաթ»

Ազգային ժողովի լրատվական ծառայության կողմից պատրաստվող հաղորդաշարը Հանրային հեռուստաընկերության եթերում յուրաքանչյուր շաբաթ լուսաբանում է խորհրդարանի աշխատանքը: Հաղորդման ընթացքում խորհրդարանական խմբերն ու խմբակցությունները կանոնակարգված ժամանակահատվածում լայն հանրության համար բարձրաձայնում են իրենց համար տեսանելի խնդիրներն ու առաջարկությունները:

«Հրապարակում»

«Հրապարակում» հաղորդաշարի նպատակն է Հանրային հեռուստաընկերության եթերում յուրաքանչյուր շաբաթ հասարակությանը ներկայացնել ՀՀ կառավարության գործունեությունը՝ հնարավորինս ամբողջական, սպառիչ և հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն հաղորդելով անցած շաբաթվա ընթացքում կառավարության ընդունած կարևորագույն որոշումների, քննարկումների մասին: Հաղորդաշարը միաժամանակ ներկայացնում է գործադիր իշխանության տնտեսական քաղաքականությունը, տարբեր ոլորտներում դրա իրականացման ընթացքն ու արդյունքները:

«02»

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության «02» հաղորդաշարի գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքներն ու ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների վրա: Այս հաղորդաշարը նպաստում է հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, ներկայացնում է օպերատիվ նկարահանումներ դեպքի վայրից, հանցագործությունների բացահայտումներ, օպերատիվ հետախուզական և քննչական միջոցառումների իրական դեպքեր, շաբաթվա քրեական քրոնիկոնը, առանձին հանցատեսակներով թեմատիկ հաղորդումներ, մասնագիտական վերլուծություններ և եզրակացություններ, ինչպես նաև պաշտոնական հանդիպումներ, այցեր, միջոցառումներ և տեսակետներ լուսաբանող ռեպորտաժներ:

«Եռանկյունի»

«Եռանկյունի» քաղաքական հաղորդման ընթացքում հաղորդավար Արմեն Աշոտյանը քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային, կրթական, ազգային և միջազգային տարբեր թեմաները քննարկում է տարբեր բնագավառի գործիչների հետ՝ նպատակ հետապնդելով Հանրայինի եթերում հասարակությանը հաղորդակից դարձնել ամենահրատապ և հետաքրքրաշարժ թեմաներին:

«Հանրային օրակարգ»

Հարցազրույցի ժանրում պատրաստվող և եթեր հեռարձակվող «Հանրային օրակարգ» հասարակական-քաղաքական հաղորդաշարի շրջանակներում հաղորդավարը շաբաթվա

ընթացքում տեղի ունեցած առավել նշանակալի իրադարձությունների մասին զրուցում է հրավիրված հյուրի հետ:

«Մարտիկ»

Հաղորդաշարի ընթացքում ներկայացվում է բանակի առօրյան: Յուրաքանչյուր հաղորդման հերոս է ընտրվում մշակութային-հասարակական հայտնի գործիչ կամ պարզապես որևէ զինվորի ծնող: Նրանք այցելում են զորամաս, զինվորների հետ ճաշում, մասնակցում մարտական և ֆիզիկական պատրաստվածության դասերին, ծանոթանում այն զենքին և զինատեսակին, որին տիրապետում է հաղորդման հերոսը, և զորավարժարանում օգտագործում այն: Շատ հաճախ «Մարտիկն» անակնկալ է մատուցում զինվորների ծնողներին. հաղորդաշարի միջոցով զինվորն այցելում է հայրական օջախ՝ հաճելիորեն զարմացնելով և ուրախացնելով ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին: «Մարտիկ» հեռուստանախագիծը պարբերաբար անդրադառնում է Հայաստանի և Արցախի զորամասերի, զորամիավորումների, դրանց հրամանատարների անցած փառապանծ ուղուն, Արցախյան հերոսամարտին, հայրենի սահմանների պաշտպանության ընթացքում զոհված հերոսներին: Ներկայացվում է զորատեսակների ստեղծման ու կայացման ընթացքը, ինչպես նաև քարոզվում են բանակին նվիրված երգեր, պարեր, ֆիլմեր և արվեստի այլ ստեղծագործություններ:

«Իմ բանակը»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Իմ բանակը» նոր հաղորդաշարը, որը ՀՀ զինված ուժերի մարտունակության, տեխնիկական ու ֆիզիկական ներուժի, հայ զինվորների ոգու և կամքի մասին է: 14 թողարկումներից բաղկացած հեռուստաֆիլմաշարը պատմում է զինվորականների մասին՝ ավիացիայի, զրահատանկային ուժերի և հատուկ նշանակության ջոկատների ամենօրյա գործողությունների մասին պատմող կադրերով: Ֆիլմերից յուրաքանչյուրը պատմում է տարբեր ջոկատների թե՛ շարքային և թե՛ հրամանատարական անձնակազմի մասին:

«Հայի ուժը»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Հայի ուժը» նոր հաղորդաշարը, որի շրջանակներում ներկայացվում է Հայաստանի մարզերի

կյանքը, հայրենասեր և իր հողին ամուր կառչած հասարակ գյուղացու օրը, կենցաղն ու հոգսերը:

«Այս օրը»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Այս օրը» նոր հաղորդաշարը, որը ներկայացնում է յուրաքանչյուր օրվա պատմական իրադարձությունները և նշում, թե ինչով է նշանավորվել այդ օրը հայ պատմության մեջ:

«Համի որակը»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Համի որակը» նոր հաղորդաշարը, որը հնարավորություն է տալիս հեռուստադիտողին ստանալ ամբողջական տեղեկատվություն տվյալ թողարկման համար ընտրված սննդամթերքի մասին: Հաղորդաշարի յուրաքանչյուր թողարկման հիմնական նպատակն է պարզել մեզ հայտնի սննդամթերքների իրական բաղադրությունները, օգտակարությունը, ինչպես նաև պահպանման եղանակները: Հաղորդման ընթացքում սննդամթերքն անցնում է լաբորատոր հետազոտություններ, փորձագետի օգնությամբ ստուգվում է, թե արդյո՞ք պիտակի վրա ներկայացված բաղադրությունը համապատասխանում է իրականությանը և չի հակասում ՀՀ օրենքով սահմանված չափանիշներին:

«Առավոտ լուսո»

Յուրաքանչյուր աշխատանքային օր Առաջին ալիքը իր առավոտյան եթերը մեկնարկում է «Առավոտ Լուսո» հաղորդաշարով. այստեղ առկա են միանգամից մի քանի ժանրեր՝ հարցազրույց, սյուժե, ակնարկ, լրատվություն, ռեպորտաժ: Հաղորդաշարի նպատակն է հեռուստադիտողին հաղորդել օրվա ռիթմը, հետաքրքիր տեղեկություններ հաղորդել օրվա հասարակական և մշակութային անցուդարձի վերաբերյալ, ինչպես նաև բազմազան թեմաների շուրջ ունենալ հետաքրքիր հարցազրույցներ տարբեր ոլորտների ճանաչված մարդկանց հետ:

«Հարցազրույց»

Ամենօրյա հարցազրույցների շարք է՝ քաղաքական դաշտի, գիտության, մշակութային ու հանրային կյանքի տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ օրվա հրատապ հարցերի վերաբերյալ:

«Առաջին տնտեսական»

Հաղորդաշարը ներկայացնում է տարադրամի փոխարժեքները, բորսային նորությունները, ինչպես նաև լուսաբանում է ՀՀ տնտեսության և միջազգային տնտեսական ոլորտի ուշագրավ իրադարձությունները:

«Մերոնք»

Այս հեռուստանախագիծը պատմում է տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցների մասին: Հաղորդաշարն ունի մի քանի ուղղվածություն՝ «Մերոնք-երաժիշտ», «Մերոնք-համայնք», «Մերոնք-արտերկրում», «Մերոնք-կինոգործիչ», «Մերոնք-հայրենադարձներ», «Մերոնք-մի հայի պատմություն», որոնցից յուրաքանչյուրը նպատակ ունի ներկայացնելու սփյուռքում ապրող և առանձին ոլորտներում իրենց գործունեությունը ծավալող մեր հայրենակիցներին, որոնք պատմում են իրենց կյանքի, գործունեության և այն երկրի մասին, որտեղ այժմ ապրում են:

«Մասնագիտությունը՝ լրագրող»

Հաղորդաշարը վեր է հանում ոչ միայն հասարակության սուր խնդիրները, այլև առանձին անհատների ունեցած խնդիրները հասարակության մեջ: Բարդ սոցիալական հարցերի վերաբերյալ լրագրողական հետաքննությունները հնարավորություն են տալիս հասկանալ իրականությունն ու խնդրին նայել բազմակողմանիորեն:

«Հայն ու Հայաստանը»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Հայն ու Հայաստանը» նոր հաղորդաշարը: Հաղորդաշարի շրջանակներում ցուցադրվում են հեռուստաֆիլմեր ու հեռուստառեպորտաժներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է հային իր կենցաղով և ցանկացած անկյունում հայկականը ստեղծելու բացառիկ շնորհով: Հեռուստալրագրող Տիգրան Դանիելյանը հեռուստադիտողին է ներկայացնում Հայաստանում ու աշխարհի տարբեր երկրներում ապրող հայերին, մարդկային պատմություններ և փաստեր, որոնց մասին քչերը գիտեն:

«Նվիրյալներ»

Հաղորդաշարը նվիրված է Արցախյան գոյամարտին և նրա հերոս մասնակիցներին՝ զինվորից մինչև գեներալ: Հեռուստադիտողին ներկայացվում է ոչ միայն ազատամարտիկի, զինվորի ու հրամանատարի ճանապարհը, այլ նաև պատերազմում բժիշկների,

հոգևորականների ու այլ մարդկանց ունեցած կարևոր ներդրումը: Հաղորդաշարի հերոսներն են այն մարդիկ, ովքեր չվախեցան կռվել ու մեռնել հանուն հայրենիքի: Կան հազվագյուտ դրվագներ մարտերից, որոնց մասին հիշում ու պատմում են ականատեսները:

Նկարահանումները կատարվում են Արցախում և Հայաստանում: Հաղթանակի ու հաղթողների մասին է պատմում վավերագրող Ցվետանա Պասկալևան:

«Դեպի Արցախ»

Հաղորդաշարի յուրաքանչյուր թողարկումը ներկայացնում է այսօրվա հյուրընկալ Արցախի կյանքի որևէ ոլորտ և բացահայտում դրա ամենահետաքրքիր մանրամասները: Ինչո՞վ է հայտնի Արցախը, ու ի՞նչն է առ այսօր մնում ստվերում, ինչո՞վ է ապրում այսօրվա երիտասարդությունը, և ի՞նչն է մտահոգում ավագ սերնդին: Արցախի լեգենդներն ու իրական պատմությունները ներկայացվում են ականատեսների աչքերով:

«Ագրոժամ»

ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ պատրաստվող հաղորդաշարը վեր է հանում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրները, ագրարային քաղաքականությունը հասանելի է դարձնում հանրությանը, օգնում գյուղացիական տնտեսություններին աշխատանքները կազմակերպելու հարցում: Սա պետական լիազոր մարմնին հարց ուղղելու նոր հարթակ է ֆերմերների համար, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվություն և աջակցություն ստանալու հնարավորություն:

«Չակերտներ»

Արթուր Բախտամյանի հեղինակային հաղորդումը բացում է բոլոր չակերտներն ու ստանում պատասխաններ՝ բացահայտելով հյուրին նաև այն կողմերից, որոնք մինչ այդ փակ էին: Ի՞նչ են նախընտրում կարդալ և դիտել, ի՞նչ վախեր ունեն, ի՞նչ չիրականացված ցանկություններ, ի՞նչ է այսօր պակասում Հայաստանին և այլն:

«Ջավախք՝ լեռնեցիների օրրան»

Հաղորդաշարը նպատակ ունի աշխարհասփյուռ հայերին ներկայացնել մի դրախտավայր, որի անունն է Ջավախք: Շառլ Ազնավուր, կարդինալ Աղաջանյան, Լուսինե Զաքարյան, Վահան Տերյան, Ջիվանի, Հովհաննես Քաջազնունի, Վարդգես Սուրենյանց, Հակոբ Կոջոյան. նրանք մեծանուն ջավախքցիների մի փոքր մասն են միայն: Հաղորդաշարը պատմում է նրանց մասին, ովքեր ապրել ու արարել են ի նպաստ հայ ազգի: Վաղ

միջնադարի բերդեր ու անառիկ պարիսպներ, Ախալքալաք բերդաքաղաք, բյուր սրբավայրեր, չքնաղ անտառներ և մոգական աղբյուրներ և իհարկե՝ դրախտային Փարվանա լիճը: Այս ամենը և ավելին ներկայացվում են հաղորդաշարի ընթացքում, որի նկարահանումներն իրականացվում են ոչ միայն Ջավախքում, այլև աշխարհի բոլոր այն մասերում, ուր տանում են ջավախքցիների հետքերը:

«Եթե բոլորը»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում ներկայացվել է «Եթե բոլորը» նոր հեռուստանախագիծը: Այն նպատակ ունի բարձրացնելու հասարակության սոցիալական պատասխանատվության զգացումը այն ընտանիքների և երեխաների նկատմամբ, որոնք ապրում են մեր կողքին և ունեն մեր օգնության կարիքը: Յուրաքանչյուր հաղորդում ներկայացնում է մի երեխայի պատմություն, որի ճակատագիրը կարող է փոխվել հեռուստադիտողի բարեգործության միջոցով: Հաղորդաշարի յուրաքանչյուր թողարկման ընթացքում հայտարարված դրամահավաքի արդյունքում հավաքագրված գումարներն ուղղվում են հաղորդաշարի մասնակից երեխաների բուժմանը: Հաղորդաշարը կոչված է ապացուցելու, որ հասարակությունը համախմբվելով կարող է փոխել իրականությունը, և բուժում ստացած երեխաների օրինակները այդ փոխված իրականության վառ ապացույցներն են:

«Կյանքը շարունակվում է»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Կյանքը շարունակվում է» նոր հեռուստանախագիծը: Հոգեբանական նովելների շարքը ներկայացնում է ընտանեկան, միջանձնային, ծնող-երեխա հարաբերությունների վերաբերյալ իրական պատմություններ: Հեռուստադիտողին հնարավորություն է տրվում կողքից նայել սեփական կյանքին, վերաարժևորել ու գնահատել, ինչպես նաև հոգեբանի մասնագիտական վերլուծության հիման վրա մտորել ներկայացված հարցերի շուրջ:

«Օտարերկրացիները Հայաստանում»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում սկսել է հեռարձակվել «Օտարերկրացիները Հայաստանում» հաղորդաշարը, որը ներկայացնում է ինչպես Հայաստանում գործունեություն ծավալող օտարերկրացիներին, այնպես էլ մեր երկիր այցելած

ստեղծագործական խմբերին, նրանց երկրների մշակույթը, խոհանոցը, ավանդույթները և կապը Հայաստանի հետ:

Մշակութային հաղորդումներ

«Արվեստանոց»

Անկաշկանդ ու մտերմիկ մթնոլորտ, անկեղծ զրույց, որն ավելի շուտ հիշեցնում է ստեղծագործական, քան ուսուցողական պրոցես. վարպետության դաս է վարում ճանաչված ու սիրված արվեստագետներից մեկը... Յուրաքանչյուր հաղորդում սկսվում է այն վարելու համար հրավիրված վարպետի բլից հարցազրույցով: Երիտասարդական լսարանի առջև ներկայացնելով իրենց մտքերն ու փորձը՝ փոքրիկ գաղտնիքներ են բացահայտում մշակույթի տարբեր ասպարեզներում հաջողության հասած արվեստագետները: Հաղորդման ավարտին նրանք պատասխանում են մասնակիցների հարցերին:

«Արվեստակիրներ»

Այս խորագրի ներքո ստեղծվել են վավերագրական երկու ֆիլմաշարեր, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 12 ֆիլմից: Հեռուստաֆիլմերը, որ նախատեսված են լայն լսարանի համար, ներկայացնում են մեր ազգային մշակույթում նշանակալի հետք թողած, ճանաչված անհատներին, նրանց, ովքեր սիրված են հայրենիքում, և ում համբավը դուրս է եկել Հայաստանի սահմաններից: Ունենալով պատմողական բնույթ՝ ֆիլմերը նաև որոշակի ինտրիգ են պարունակում, քանի որ հեղինակները ներկայացնում են ոչ թե ֆիլմի հերոսի կատարյալ կերպար, այլ մարդուն՝ իր ուժեղ ու թույլ կողմերով, ստեղծագործական փնտրտուքներով ու տարակուսանքներով, որին, անշուշտ, խորթ չեն նաև մոլորությունները:

«Արտկանոն»

«Արտկանոնը» բաղկացած է մի քանի բաժիններից՝ շաբաթվա մշակութային իրադարձությունների ազդագիր, հանրային հնչեղություն ունեցող մշակութային որևէ թեմայի շուրջ բանավեճ, նույն թեմայով տեսանյութ, ինչպես նաև անդրադարձ շաբաթվա միջազգային կարևոր իրադարձություններին: «Սկանդալային դեմք» խորագրի ներքո իրականացվում է ինքնատիպ սոցհարցում մշակութային իրադարձության, գործչի կամ թեմայի շուրջ: Հարցախույզի նպատակն է պարզել, թե որքանով են տեղեկացված մեր համաքաղաքացիները: Պատասխանները հաճախ բավական անսպասելի են ու տպավորիչ:

«Արտկանոնը» մշակութային հաղորդաշար է՝ նոր կանոններով, մշակույթի հանդեպ նոր հայացքով: Տաղավարում հյուրընկալվում են մշակույթի տարբեր ոլորտների (կինո, թատրոն, արվեստ, գրականություն, երաժշտություն) ճանաչված արվեստագետներ:

«Հայից Հայ»

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Արփեն Մովսեսյանի «Հայից Հայ» հեղինակային հաղորդաշարը լուսաբանում է հայ արվեստը, մշակույթը, գիտությունն ու պատմությունը: Հաղորդաշարի յուրաքանչյուր թողարկում նվիրված է հայ մշակույթի, արվեստի կամ այլ բնագավառի կարկառուն ներկայացուցիչների կյանքի և գործունեության լուսաբանմանը: Այս հաղորդաշարի նպատակն է հեռուստադիտողին ծանոթացնել հայ ազգի ականավոր ներկայացուցիչների կյանքի և գործունեության հայտնի և անհայտ կողմերին: Հաղորդման հեղինակ և վարող Արփեն Մովսեսյանը հանդիպումներ է ունենում տարբեր բնագավառների հայ գործիչների հետ և զրուցում հայ մեծերի կյանքի ու գործունեության մասին:

Ֆիլմեր և այլ մշակութային հաղորդումներ

2016 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռարձակել հայրենական և արտասահմանյան հայտնի կինոարտադրող ընկերությունների արտադրության թե՛ արդեն սիրված և թե՛ ժամանակակից գեղարվեստական ու վավերագրական ֆիլմեր, ինչպես նաև լուսաբանել մշակութային տարաբնույթ միջոցառումներ և փառատոններ:

<u>Կրթական, մանկապատանեկան հաղորդումներ</u>

«Հայ ասպետ»

Հեռուստամրցախաղ բառահանդես է, որտեղ վիճակահանությամբ ընտրված 3 դպրոցների 4-7-րդ դասարանների լավագույն աշակերտներից ձևավորված թիմերը մրցում են հայագիտության բոլոր ոլորտներից իրենց գիտելիքներով (պատմություն, լեզու-գրականություն, բնություն և աշխարհագրություն, հայ արվեստի պատմություն, առասպելներ և ավանդություններ, երգ ու պար, վարվեցողության ազգային ավանդույթներ և այլն): Ամսվա առաջին երեք շաբաթների հաղթող թիմերը դառնում են «Հայ ասպետ» և վերջին շաբաթում մրցում միմյանց հետ՝ այսպիսով ընտրելով տվյալ ամսվա հաղթողին: Յուրաքանչյուր ամսվա հաղթող թիմի հետ կազմակերպվում է հայրենաճանաչողական արշավ Հայաստանի որևէ

պատմական վայր, որը նկարահանվում է և, որպես հաղորդման հավելված, նույնպես ցուցադրվում: Այնուհետև յուրաքանչյուր 3 ամիսների հաղթողները մրցում են իրար հետ. ընտրվում է եռամսյակի հաղթող, իսկ ուսումնական տարվա վերջում երեք եռամսյակների հաղթողներն էլ մրցում են իրար հետ: Այսպիսով որոշվում է տարվա հաղթող թիմը:

«Ուզում եմ դառնալ»

«Ուզում եմ դառնալ» հաղորդաշարը նախատեսված է 10-16 տարեկան երեխաների և պատանիների համար. նպատակն է հեռուստադիտողների համար բացահայտել գոյություն ունեցող մասնագիտություններն ու դրանց գաղտնիքները: Տեսանյութերը պատկերավոր ներկայացնում են տվյալ մասնագիտության ստեղծման պատմությունը՝ համեմված հետաքրքիր և ուշագրավ փաստերով: Հաղորդման հերոսները երեխաներ են, ովքեր արդեն կողմնորոշվել են ապագա մասնագիտության ընտրության հարցում:

«Ինչուների մոլորակ»

Հաղորդաշարը մանկապատանեկան ձևաչափով նոր նախագիծ է, որի ընթացքում երեխաները կգտնեն իրենց հուզող շատ հարցերի պատասխանները, նույնիսկ այնպիսի հարցերի, որոնց շուրջ դեռևս չէին էլ մտածել: Գունեղ, բարի, ուրախ և ստեղծագործ մոլորակում հմուտ ձեռքեր ունեցող հաղորդավարները պատրաստում են զարմանալի իրեր, զվարճալի խաղալիքներ: Իսկ հաղորդման ընթացքում ցուցադրվող մուլտֆիլմը կօգնի դառնալ ավելի բանիմաց: «Ինչուների մոլորակը» նոր պատուհան է դեպի գիտելիքների անծայրածիր աշխարհ: Այդ մոլորակի հյուրընկալ դռները միշտ բաց են շնորհալի և ստեղծագործ միտք ունեցող երեխաների առջև:

«Հայադարան»

Հաղորդաշարը բաղկացած է միջինում 35 րոպե տևողությամբ հաղորդումներից՝ նվիրված հայ մեծանուն գրողներին:

«Արքիմեդիա»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում ներկայացվել է ուսուցողական և ժամանցային «Արքիմեդիա» նոր հաղորդաշարը, որը ֆիզիկայի մասին է: Հաղորդաշարը ներկայացնում է ֆիզիկայի դպրոցական ծրագրի գրեթե բոլոր բաժինները. բարդ թվացող բաժինները ներկայացվում են երիտասարդ հաղորդավարի և ֆիզիկայի փորձագետի կողմից՝ պարզեցված, մատչելի և զվարճալի մատուցմամբ: Հաղորդման

ընթացքում ներկայացվում են ինչպես տեսագրված, այնպես էլ տաղավարում իրականացվող փորձեր: Հաղորդաշարը համեմված է նուրբ հումորով, բացատրում է մեզ շրջապատող բնական երևույթները գիտական ճշտությամբ, ու թեև հաղորդման թիրախը պատանի հեռուստադիտողն է, այն անտարբեր չի թողնի նաև մեծահասակներին:

<u>Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության հաղորդումներ</u>

«Հայաստանի ճամփեքով»

Հաղորդաշարը կառուցված է հեռուստաճամփորդության ժանրի կանոններով, որի նպատակն է հանրահռչակել Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանները, մշակութային ժառանգությունը և ականավոր մարդկանց: Սա հայրենաճանաչության յուրօրինակ հեռուստադաս է, որն առանց պարտադրանքի լսարանի ուշադրությունն է հրավիրում մեր հայրենիքի նյութական և մարդկային հարստության վրա, ձևավորում է հոգատար և պատասխանատու վերաբերմունք սեփական մշակութային ժառանգության նկատմամբ:

«Օտար, ամայի ճամփեքի վրա»

Հաղորդաշարը յուրատեսակ հեռուստատեսային նախագիծ է, որը հեռուստադիտողին ուղեկցում է աշխարհի զանազան երկրներով ու քաղաքներով: Այս հեռուստանախագիծը հնարավորություն է տալիս ոչ միայն ճանաչել աշխարհի պատմաճարտարապետական հուշարձաններն ու տեսնել տեսարժան վայրերը, այլև ծանոթանալ համաշխարհային քաղաքակրթության մշակութային առանձնահատկությունների հետ: Այս առումով հաղորդաշարն ունի ևս մեկ շահեկան կողմ. յուրաքանչյուր արտասահմանյան ճամփորդության ժամանակ ներկայացվում է տեղի հայությունը և նրա ունեցած ավանդը տվյալ երկրի մշակութային ու տնտեսական կյանքում:

«Հայաստանի առեղծվածները»

Ինչպես բոլոր հին քաղաքակրթական բնօրրաններում, այնպես էլ Հայաստանի տարածքում առասպելի և իրականության սահմանները հաճախ հատվում են, և հաճախ դժվար է լինում զատել ճշմարտությունը հորինվածքից: Ահա այդպիսի առեղծվածային խնդիրների բացահայտմանն է նվիրված Ստեփան Զաքարյանի հեղինակային հաղորդումը:

«Անծանոթ Հայաստան»

Հեռուստանախագիծը կրթական-ճանաչողական ֆիլմերի շարք է, որը փորձում է պատասխանել հայոց պատմությանը վերաբերող, դեռևս անպատասխան մնացած հարցերին, բացահայտել Հայաստանի և հայերի հետ կապված անհայտ կամ քիչ ծանոթ պատմությունները և իրադարձությունները: Ֆիլմաշարը պատմում է մեզ ծանոթ և միևնույն ժամանակ անծանոթ Հայաստանի մասին՝ հնարավորություն ստեղծելով այն ընկալել նոր տեսանկյունից:

«Մատենադարան. ձեռագրերի գաղտնիքները»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում սկսել է հեռարձակվել «Մատենադարան. ձեռագրերի գաղտնիքները» նոր հաղորդաշարը, որը պատմում է հայկական ամենամեծ ձեռագրապահոցում գտնվող հնագույն ձեռագրերի ու գրքերի ստեղծման, գոյատևման պատմությունը: Յուրաքանչյուր ֆիլմն առանձին ներկայացնում է որևէ ձեռագիր և նրա անցած ուղին: Այդ մասին պատմում են գիտակներն ու փորձագետները: Նրանց խոսքը և պատմական տարբեր հայտնի փաստեր համադրելով՝ ուրվագծվում է այն միակ ու ճշմարիտ ուղին, որով անցել է տվյալ գիրը Մատենադարանում հայտնվելուց առաջ: Հաղորդաշարի ընթացքում լուսաբանվում են տարբեր ասպարեզներում տեղ գտած գրեր՝ իրավական, բժշկական, աստղագիտական և այլն: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել գրի ստեղծման դարաշրջանի հրամայականները, գրի նշանակությունն ու ունեցած դերն իր ժամանակաշրջանում:

«Մայրիկների ակումբ»

Հաղորդաշարի ուշադրության կենտրոնում երեխաներն են և նրանց մայրերը: «Մայրիկների ակումբ» հաղորդաշարը ներկայանում է մայրիկների հետ ինտերակտիվ խաղի ձևաչափով: Հայտնի է, որ սովորելու լավագույն եղանակը խաղն է: Մայրիկների ակումբի հեռուստադիտողներն ու հաղորդման մասնակիցները հնարավորություն ունեն մոր և մանկան առողջությանը, երեխաների դաստիարակությանը, ծնողական հմտություններին վերաբերող գիտելիքները ստանալ հենց խաղի միջոցով: Հաղթահարելով հաղորդման փորձությունները՝ լավագույն մասնակիցները ապացուցում են, որ հենց իրենք են ամենաբանիմաց ու տեղեկացված մայրերը:

«Փակ վարագույր»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում սկսել է հեռարձակվել Հենրիկ Հովհաննիսյանի հեղինակային «Փակ վարագույր» նոր հաղորդաշարը, որի հիմքում թատերագիտական զրույցներ են: Հաղորդաշարի նպատակն է հանրամատչելի եղանակով քննել ու քննարկել թատրոնի և անհատի, թատրոնի և հասարակության հարաբերությունները: Թատերագիտական վերլուծությունները կատարվում են տարաբնույթ պատկերազարդ նյութերով՝ պատմական և արդիական օրինակների հիման վրա:

«Հայաստանի թանգարաններ»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում սկսել է հեռարձակվել «Հայաստանի թանգարաններ» հաղորդաշարը, որի շրջանակներում ներկայացվում են Հայաստանում գործող թանգարանների պատմությունը, ներկան, դրանցում պահվող հավաքածուները, թանգարանների հետ կապված անվանի մարդկանց կյանքն ու գործունեությունը և այլն:

«25 պատմություն անկախության մասին»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «25 պատմություն անկախության մասին» հաղորդաշարը, որը պատմում է Հայաստանի Հանրապետության անկախության 25 տարիների ընթացքում ձեռքբերումների, մարդկային ճակատագրերի և հաղթանակների մասին:

«Հայկական սրբավայրեր»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Հայկական սրբավայրեր» նոր հաղորդաշարը, որն պատմում է Հայաստանում կամ արտերկրում գտնվող եկեղեցիների մասին. ներկայացնում է դարավոր սրբավայրերի հիմնադրման պատմությունը, ներկա վիճակը և այն հոգևոր ժառանգությունը, որը դարերի ընթացքում փոխանցվել է սերնդից սերունդ:

«Հայ սփյուռք»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Հայ սփյուռք» նոր հաղորդաշարը, որը հեռուստադիտողին է ներկայացնում ամբողջ աշխարհով սփռված հայկական համայնքները, դրանց ծավալած գործունեությունը, տվյալ

տարածքներում գործող հայկական կառույցները և այդ երկրներում հայերի հաստատվելու մասին վաղ շրջանի վկայությունները:

«Աշխարհի թանգարաններ»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Աշխարհի թանգարաններ» նոր հաղորդաշարը, որի մասերից յուրաքանչյուրը պատմում է աշխարհի տարբեր երկրներում գործող հանրահայտ թանգարանների մասին՝ ներկայացնելով վերջիններիս ստեղծման պատմությունը, ժամանակավոր ու մշտական ցուցադրությունները:

«Բացահայտիր Հայաստանը»

Հաղորդաշարը ներկայացնում է Հայաստանի բնակավայրերը, պատմամշակութային կոթողները, եկեղեցիներն ու վանքերը, օտարերկրացիների համար հետաքրքրություն ներկայացնող վայրերը:

«Գաղտնի թղթապանակ»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում սկսել է հեռարձակվել «Գաղտնի թղթապանակ» հաղորդաշարը, որը պատմում է հայ իրականության ու ոչ վաղ անցյալի պատմության այն իրադարձությունների մասին, որոնք դեռևս մինչև վերջ չեն բացահայտվել և մնացել են փոշոտ թղթապանակների դեղնած էջերին:

Փաստավավերագրական ֆիլմեր

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստվել և հեռարձակվել են տարբեր ոլորտների հայ մեծանուն ու նշանակալի ներդրում ունեցող անձանց կյանքի ու գործունեության մասին պատմող փաստավավերագրական ֆիլմեր:

<u>Մարզական հաղորդումներ</u>

«Շախմատի աշխարհ»

Հաղորդաշարը ներկայացնում է շախմատային աշխարհի կարևոր իրադարձությունները: Հաղորդաշարի հյուրերի հետ քննարկվում են Հայաստանում շախմատային կարևոր միջոցառումներն ու շախմատի՝ որպես ուսումնական առարկայի, դասավանդման արդյունավետության և շախմատային աշխարհի լավագույնների մասին պատմող տեսանյութերն ու սյուժեները:

«Լրացուցիչ ժամանակ»

Հաղորդաշարը ներկայացնում է ֆուտբոլային կյանքն ու անցուդարձը, մութ ու խորհրդավոր պատմությունները: Պարբերաբար անդրադառնալով այս կամ այն ֆուտբոլային ակումբին՝ «Լրացուցիչ ժամանակը» փորձում է նպաստել հեռուստադիտող-ֆուտբոլային ակումբ կապի ամրապնդմանը: Հաղորդաշարը բաղկացած է բացառիկ հարցազրույցներից ու ռեպորտաժներից, միջազգային ֆուտբոլի լայն անդրադարձից: Հաղորդման ընթացքում լուսաբանվում են շաբաթվա ամենահետաքրքիր դրվագները, գոլերն ու վրիպումները:

«Խաղից դուրս»

Կարեն Գիլոյանի հեղինակային հաղորդաշարն ամեն շաբաթ ներկայացնում է սպորտային կյանքի նորությունները, հրատապ ու թեժ թեմաները: Հաղորդաշարը փորձում է բացահայտել բոլոր այն խնդիրները, որոնք առկա են հայկական սպորտային միջավայրում: Հաղորդմանը մասնակից հյուրերի հետ քննարկվում են ոլորտի խնդիրները, դրանց լուծման հավանական տարբերակներն ու արդյունավետ ելքերը:

«Հաղթանակ կերտողները»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում սկսել է հեռարձակվել «Հաղթանակ կերտողները» հեռուստատեսային փաստագրության ժանրում նկարահանված ֆիլմաշարը, որը պատմում է հայկական սպորտի վառ ներկայացուցիչների մասին՝ Տիգրան Պետրոսյան, Ալբերտ Արզումանյան, Արթուր Ալեքսանյան, Միհրան Հարությունյան, Հարություն Մերդինյան, Արսեն Ջուլֆալակյան, Աշոտ Դանիելյան, Արմեն Նազարյան, Ռոման Ամոյան, Ստեփան Սարգսյան և շատ ու շատ այլ մարզիկներ: Համաշխարհային սպորտում հայկական եռագույնի պատիվը միշտ բարձր պահած, ուրախության արցունքներ և հաղթանակի անկրկնելի պահեր պարգևած մարզիկների մասին ֆիլմաշարը բացահայտում է այն ամենը, ինչ սովորաբար մնում է կադրից դուրս. անդադար մարզումներ, վնասվածքներ, անասելի ցավ ու հիասթափություններ, և այս ամենի հետ մեկտեղ՝ չընդհատվող պատմություններ, որոնք ստեղծել են հաղթանակ:

Մարզական այլ հաղորդումներ

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել են ֆուտբոլի Եվրոպայի առաջնության հանդիպումները, Ռիո դե Ժանեյրոյում կայացած ամառային

օլիմպիական խաղերը, ծանրամարտի ու ըմբշամարտի Եվրոպայի առաջնության մրցաշարերը և այլ նշանակալի սպորտային միջոցառումներ:

<u>Երաժշտական հաղորդումներ</u>

«Երգ երգոց»

Արդեն շուրջ յոթ տարի է՝ հաղորդաշարի թեման հայ երգն է՝ սկսած միջնադարյան տաղերից մինչև 80-ականների վերջի հեղինակային երգերը: Առանձին հաղորդումներ են նվիրվում հայ անվանի կոմպոզիտորներին և նրանց ստեղծագործություններին, զանազան հոբելյանական առիթներով հնչում են սիրված երգեր: Հանրապետության շնորհալի երգիչների կատարումներին զուգահեռ, հատուկ պատրաստված ժամանակագրական տեսաֆիլմերով ներկայացվում է տվյալ երգի կամ հեղինակի ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական և տնտեսական համատեքստը՝ հաղորդմանն օժտելով նաև ճանաչողական ոչ պակաս կարևոր գործառույթ: Հաղորդման բովանդակային նյութին համապատասխան հրավիրվում են հյուրեր, ովքեր իրենց մեկնաբանություններով և հուշերով ամբողջացնում են տվյալ թեմայի համակողմանի լուսաբանումը:

«Երաժշտական փոստարկղ»

Հաղորդման ստեղծագործական խումբը մեկ առ մեկ ընթերցում է բոլոր նամակ-պատվերները և դրանցից ընտրում լավագույնները, որոնք բարձրացնում են մարդկանց տրամադրությունը: Հաղորդումների ընթացքում մատուցվում են բազմաժանր ու բազմազան երգեր՝ դասական, ազգային, ժողովրդական, ազգագրական, հայկական և արտասահմանյան էստրադային, հեղինակային և շատ ու շատ հին ու նոր ստեղծագործություններ:

«Դեպի Եվրատեսիլ»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում ներկայացվել է «Դեպի Եվրատեսիլ» երաժշտական հեռուստանախագիծը, որի մասնակիցները հայ արտիստներն են ամբողջ աշխարհից: Հեռուստադիտողները քվեարկության միջոցով հնարավորություն ունեն ընտրելու «Եվրատեսիլ» միջազգային երգի մրցույթի հայաստանյան պատվիրակին: Հաղորդաշարի ընթացքում նախորդ տարիներին «Եվրատեսիլ» մրցույթի հայաստանյան մասնակիցներից բաղկացած մասնագիտական ժյուրին ուղղորդում է մասնակիցներին և հեռուստադիտողի հետ միասին ընտրում հաղթողին, որն արժանի է Հայաստանը

ներկայացնելու այդ հեղինակավոր երաժշտական մրցույթում: Հաղորդաշարը յուրօրինակ հնարավորություն է հեռուստադիտողի համար մասնակից դառնալու այս կարևոր ու պատասխանատու գործընթացին:

«Ամենակարող երգիչ»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Ամենակարող երգիչ» հեռուստանախագիծը, որի նպատակն է բացահայտել նոր անուններ: Հեռուստատեսային հարթակում մրցում են երգիչներ, որոնց կատարումները գնահատում է մասնագիտական ժյուրին: «Ամենակարող երգիչ» երաժշտական նախագիծը հնարավորություն է տալիս երգիչ-երգչուհիներին իրենց ուժերը փորձել ամենատարբեր ժանրերում և թեմատիկ երգերում:

«Բենեֆիս»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Բենեֆիս» հաղորդաշարը, որը ներկայացնում է Հայաստանում ամենահայտնի կատարողներին, նրանց լավագույն երգերը, անցած ստեղծագործական ճանապարհն ու հետաքրքիր դրվագներ նրանց կյանքից: Հաղորդաշարի յուրաքանչյուր հաղորդման ընթացքում արտիստները կատարում են իրենց ամենահայտնի երգերը և ներկայացնում երգի պրեմիերաներ: Սիրված երգերով ու տեսանյութերով երգիչները ներկայացնում են իրենց հիմնական ձեռքբերումները:

Հանրային հեռուստաընկերության ստեղծման 60-ամյակին նվիրված միջոցառումներ

2016 թվականին մեծ շուքով նշվել է Հանրային հեռուստաընկերության ստեղծման 60-ամյա հոբելյանը, որի կապակցությամբ կազմակերպվել են մի շարք տոնական միջոցառումներ ու համերգներ: Հանրային հեռուստաընկերության կողմից նկարահանված և հեռարձակված միջոցառումների ընթացքում պետական պարգևներ, պատվոգրեր ու շնորհակալագրեր են հանձնվել երկար տարիների փորձ ու Հանրային հեռուստաընկերության հիմնադրման գործում նշանակալի ավանդ ունեցող աշխատակիցներին: Միջոցառումներն ուղեկցվել են հայ էստրադային սիրված երգիչ-երգչուհիների կատարումներով և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի նվագակցությամբ: 2016 թվականին նախաձեռնվել են հայկական հեռուստատեսության հիմնադրման պատմության վերաբերյալ «Հանրային 60» փաստագրական գրքի պատրաստման աշխատանքները: Հանրային հեռուստատեսության

հոբելյանին նվիրված գիրքը հեռուստատեսության հիմնադրման, հայկական հեռուստաեթերի կենսագրության և զարգացման մեջ անփոխարինելի ավանդ ունեցած մարդկանց, պատմական և նշանակալի տեղեկատվության ստեղծման և զարգացման ուղու մասին է: Այն իր ուրույն տեղը կզբաղեցնի հայկական հեռուստատեսության արժևորման գործում, ինչպես նաև կծառայի որպես ուսումնական ձեռնարկ ապագա հեռուստալրագրողների համար:

Համերգներ և երաժշտական այլ հաղորդումներ

2016 թվականին Հանրային հեռուստաընկերությունը հեռարձակել է «Եվրատեսիլ», «Մանկական Եվրատեսիլ», «Մանկական Նոր Ալիք» երաժշտական մրցույթները, ինչպես նաև հայրենական ու միջազգային հեղինակավոր դասական համերգներ ու այլ երաժշտական փառատոններ:

<u>Զվարճալի-ժամանցային հաղորդումներ</u>

«Մեր մեջ ասած»

Հեռուստանախագիծը վարում են երկու հայտնի կանայք՝ հաղորդավար և պրոդյուսեր Արևիկ Ուդումյանը և դրամատուրգ Կարինե Խոդիկյանը: Տաղավարում նրանք հյուրընկալում են հանրությանը հայտնի կամ անհայտ որևէ մարդու, որը ներկայացնում է իր կյանքի ամենահետաքրքիր ու շրջադարձային դրվագներից մեկը: Ամեն անգամ ճանաչված մարդիկ ներկայանում են նորովի՝ պատմելով այն, ինչի մասին դեռ ոչ մի տեղ չի խոսվել: Տաղավարում հյուրերը միշտ անկեղծ են և անմիջական:

«Ճակատագրեր»

«Ճակատագրեր» ֆիլմաշարը ներկայացնում է հայտնի մարդկանց ճակատագրերը: Հերոսները պատմում են ճակատագրական հանդիպումների, կյանքի անսպասելի շրջադարձերի, անցյալի նվիրական հուշերի, ներկայի մտահոգությունների ու վաղվա երազանքների մասին:

«Գուշակիր մեղեդին»

Հաղորդաշարը հեռուստադիտողին հնարավորություն է տալիս մաս կազմելու երաժշտական հեռուստանախագծին, ստուգելու իրենց երաժշտական գիտելիքները և հետևելու հայտնի մասնակիցների՝ երգիչների, դերասանների, հասարակական գործիչների խաղին: Աշխատանքային օրերի ավարտին մոտ 30 րոպե դրական ու ջերմացնող լիցքեր

կհաղորդեն սիրելի ու գուցե երբեմն մոռացված մեղեդիները: Հեռուստանախագծի հաղորդավարն է Ավետ Բարսեղյանը:

«Պատրաստենք միասին»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Պատրաստենք միասին» նոր հաղորդաշարը, որի նպատակը ոչ միայն նոր ճաշատեսակի բաղադրատոմս ներկայացնելն է, այլև լսարանին խոհարարական արվեստին հաղորդակից դարձնելը՝ օգտակարն ու հաճելին միաձուլելը: Խոհարարական բազային գիտելիքներին գումարելով երևակայությունն ու լավ տրամադրությունը՝ հնարավոր է ամենօրյա փոքր գլուխգործոցներ ստեղծել: Յուրաքանչյուր հաղորդման ընթացքում մանրամասն ներկայացվում ու հեղինակային յուրահատկություններով համեմվում են ինչպես համաշխարհային ճանաչված ուտեստներ, այնպես էլ տարբեր ազգերի՝ վերափոխված խոհանոցային նմուշներ:

«Կյանքը ափի մեջ»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Կյանքը ափի մեջ» հաղորդաշարը, որը մարդու մասին է՝ նրա հույզերի, զգացողությունների ու ապրումների: Հարմարավետ ու մտերմիկ մթնոլորտում սիրված ու ճանաչված մարդիկ են, որոնք ներկայանում են նոր ու հետաքրքիր անձնային որակներով:

«Հենց այսպես էլ ապրում ենք»

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է «Հենց այսպես էլ ապրում ենք» նոր հաղորդաշարը, որը ներկայացնում է Երևան քաղաքի այն իրադարձություններն ու մարդկանց, առանց որոնց դժվար է պատկերացնել մեր սիրելի մայրաքաղաքը: Մայրաքաղաքի պատմությունն ու անցյալը, մշակույթն ու մարդիկ ներկայացվում են մտերմիկ զրույցների, հիշողությունների ու փաստացի վկայությունների միջոցով: Հրանտ Թոխատյանը տաղավարում հյուրընկալում է քաղաքային պատմություններից մեկին առնչվող, քաղաքին գույն ու դիմագիծ հաղորդող մարդկանց ու նրանց հետ վերհիշում մայրաքաղաքի պատմության ամենավառ էջերից մեկը: Զրույցներն ընթանում են մաեստրո Մարտին Վարդազարյանի մատուցած երաժշտության ներքո և ուղեկցվում են թեմատիկ տեսանյութերով ու երաժշտական ընդմիջումներով:

«Հատուկ բաժին»

16 մասից բաղկացած «Հատուկ բաժին» դետեկտիվ ժանրի բազմասերիանոց հեռուստաֆիլմի գործող անձինք ոստիկանության համակարգի օպերատիվ-քրեագիտական հատուկ բաժնի աշխատակիցներն են, իսկ սյուժեի հիմքում՝ բարդ և հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունները: Նորագույն տեխնիկական և լաբորատոր սարքավորումներով համալրված բաժինը հնարավորություն ունի կատարելու ցանկացած քրեագիտական հետազոտություն: Բաժնում աշխատում են համակարգի լավագույն մասնագետները, որոնք իրենց աշխատանքի նվիրյալներ են: Ֆիլմը նպատակ ունի հանրությանը ներկայացնել ՀՀ ոստիկանության պատասխանատու գործունեությունը:

Ժամանցային այլ հաղորդումներ

Հանրային հեռուստաընկերությունը 2016 թվականի ընթացքում հեռարձակել է նաև միջազգային խոշոր ու նշանակալի միջոցառումներ, ինչպիսիք են կինոարտադրության հեղինակավոր «Օսկար» մրցանակաբաշխությունը, հայտնի Նոբելյան մրցանակաբաշխությունը և այլն:

<u>Հեռուստահաղորդումների հեռարձակում</u>

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի և միջազգային ալիքի հաղորդումները հեռարձակվել են օրական 24 ժամ:

Առաջին ալիքի հեռարձակումը ՀՀ տարածքում և Արցախում իրականացվել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության միջոցով: Մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսը Երևան քաղաքում և ՀՀ մարզերում Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի անալոգային հեռարձակմանը զուգահեռ իրականացվել է նաև թվային հեռարձակում, իսկ 2016 թվականի նոյեմբեր ամսից սկսած ՀՀ ողջ տարածքում իրականացվել է միայն թվային հեռարձակում:

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի հեռարձակումն արտերկրում ապահովվել է «Գլոբքասթ Ֆրանս» (Globecast France) և «Արքիվա» (Arqiva) ընկերությունների կողմից բաց ազդանշանով՝ «Հոթբըրդ 13D» (Hotbird 13D) և «Գալաքսի 19» (Galaxy 19) արբանյակների միջոցով, որոնց հեռարձակման ընդհանուր տիրույթը ներառել է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա, Իրան, Ռուսաստանի

հիմնական մասը՝ բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները, Հյուսիսային Ամերիկան և Հարավային Ամերիկայի հյուսիսային մասը:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է նաև իր աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում կաբելային կապուղիներով, ինչպես նաև ինտերնետային և բջջային հեռուստատեսության (IPTV և OTT) և ինտերնետային կայքէջի միջոցով միջազգային ալիքը հեռարձակելու ուղղությամբ: ԱՊՀ երկրներում, հատկապես՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում, ինչպես նաև Վրաստանում, շարունակել են աճել Հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակման ծավալները: Ֆրանսիայում կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի հաղորդումները հեռարձակվել են ֆրանսիական տարբեր ընկերությունների կողմից: ԱՄՆ-ում միջազգային ալիքը շարունակել է հեռարձակվել «Վերայզոն» (Verizon) ընկերության միջոցով, որը ոլորտի առաջատարներից է, ինչպես նաև մի շարք այլ՝ ինտերնետային լուծումներով մեծ տարածում ունեցող ընկերությունների միջոցով:

Հանրային հեռուստաընկերության միջազգային հեռուստաալիքը ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում և հարակից շրջաններում հասանելի է նաև 18.1 և 20.5 թվային վերգետնյա չկոդավորված ալիքներով, ինչը հնարավորություն է տալիս այդ շրջաններում բնակվող ավելի քան կես միլիոն հայ բնակչությանն անվճար և դյուրին ձևով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:

Հանրային հեռուստաընկերությունն իր պաշտոնական վեբ կայքի (www.1tv.am) միջոցով իրականացրել է հեռարձակում իրական ժամանակում՝ հասանելի դարձնելով հաղորդումների համաժամանակյա դիտումը ամբողջ աշխարհում: Ավելին, ներկայումս Հանրային հեռուստաընկերության եթերին կարելի է հետևել ինչպես անհատական համակարգչով ու ինտերնետային հեռուստատեսությամբ, այնպես էլ բջջային հեռախոսներով և պլանշետներով՝ IOS և Android համակարգերի համար մշակված անվճար բջջային հավելվածների միջոցով: Վեբ կայքը հնարավորություն է տալիս նաև առցանց դիտել արդեն հեռարձակված և արխիվացված հեռուստահաղորդումները՝ հեղինակային և հեռարձակման իրավունքների խիստ պաշտպանությամբ:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հանրային հեռուստաընկերությունը 2016 թվականին իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, միջազգային ալիքի առևտրային և Առաջին ալիքի սոցիալական գովազդից, մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ընթացքում հովանավորչությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման, ինչպես նաև տեխնիկական վերազինման և շենք-շինությունների հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է՝

- 08.03.01.02 «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով՝ 4 734 678.1 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),
- 08.03.01.11 ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության շենք-շինությունների հիմնանորոգում» ծրագրով՝ 200 000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),
- 08.03.01.13 ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ տեխնիկական վերազինում» ծրագրով՝ 129 860.3 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Բացի այդ, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 215 -Ն որոշմամբ, ավելացված արժեքի հարկի վճարման գծով առաջացած պարտավորությունների կատարման նպատակով Հանրային հեռուստաընկերությանը 11.01.01.01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրով հատկացվել է 132 601.9 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության կողմից 2016 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 4

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	**Եկամտի տեսակ**	**Գումար**
1	ՀՀ պետական բյուջեի ընթացիկ դրամաշնորհներից եկամուտ, այդ թվում	4 867 280
1.1	*«Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով*	*4 734 678*
1.2	*«ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրով*	*132 602*
2	Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	734 116
3	Այլ դրամաշնորհներից եկամուտ	3 727
4	Առևտրային եկամուտներ, այդ թվում՝	568 303
4.1	*Առաջին ալիքի սոցիալական գովազդից, մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հաղորդումների հովանավորչությունից, միջազգային ալիքի առևտրային գովազդից եկամուտ*	*321 153*
4.2	*Ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից եկամուտ*	*196 861*
4.3	*Հեռարձակումից և վերահեռարձակումից եկամուտ*	*21 224*
4.4	*Այլ առևտրային եկամուտ*	*29 065*
5	Այլ եկամուտ	26 689
Ընդամենը		**6 200 115**

Աղյուսակ 4-ի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից ստացված կապիտալ դրամաշնորհի հաշվին ձեռք բերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2016 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը:

Աղյուսակ 5-ում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության 2016 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 5

2016 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	1 596 700
2	Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսեր	2 511 686
3	Հեռարձակման ծախսեր	427 960
4	Մաշվածք և ամորտիզացիա	976 042
5	Այլ ծախսեր	581 683
Ընդամենը		**6 094 071**

Աշխատավարձերի, հավելավճարների և այլ վարձատրությունների գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 26.2%-ը և ներառել են հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև մարզային և արտերկրի թղթակիցների վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 41.2%-ը և ներառել են հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների, ֆիլմերի և տարբեր նշանակալի սպորտային ու մշակութային միջոցառումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, ինչպես նաև հաղորդումների ստեղծագործական խմբերի և կրկնօրինակման ծառայությունների վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 7.0%-ը և ներառել են թվային և անալոգային, ինչպես նաև արբանյակային և առցանց ինտերնետային կապուղիներով հեռարձակման ծախսերը:

Մաշվածքի և ամորտիզացիայի գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 16.0%-ը և ներառել են շենքերի և շինությունների, ինչպես նաև այլ հիմնական միջոցների և արտադրական նշանակության ծրագրային միջոցների ամորտիզացիայի ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 9.5%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի, լրատվության և այլ

արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, ներկայացուցչական, աուդիտի, գործուղման ծախսերը, հարկերը և տուրքերը (ներառյալ շահութահարկի գծով ծախսը և հետաձգված հարկերի գծով փոխհատուցումը), ինչպես նաև զուտ ֆինանսական ծախսերը:

2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթը կազմել է 106 044.0 հազ. դրամ:

2016 թվականի գործունեության ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարել 745 637.6 հազ. դրամ:

2015 թվականի գործունեության արդյունքներով Հանրային հեռուստաընկերությունը ՀՀ պետական բյուջե է վճարել 32 275.1 հազ. դրամ շահութաբաժին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 24-ի N 1128-Ա որոշմամբ Երևանի քաղաքային համայնքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց 80 հասցեում գտնվող 1.4 հեկտար մակերեսով հողամասը՝ 225 000.0 հազ. դրամ գնահատված շուկայական արժեքով, 2016 թվականին ներդրվել է Հանրային հեռուստաընկերության կանոնադրական կապիտալում:

Հանրային հեռուստաընկերությունը 2016 թվականի ընթացքում ձեռք է բերել 414 817.3 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ տեխնիկական սարքավորումներ և արտադրատնտեսական գույք, մասնավորապես՝ հեռուստատեսային և համակարգչային տեխնիկա, արտատաղավարային նկարահանումների համար նախատեսված տրանսպորտային միջոց, տաղավարների ձևավորման դեկորացիաներ, օդորակման և օդակարգավորման համակարգեր, հեռուստատեսային տեխնիկայի ծրագրային լիցենզիաներ, ինտերնետային կայքի տեխնիկական արդիականացման ծառայություններ, գրասենյակային կահույք, տնտեսական գույք, և այլն, որից 129 860.3 հազ. դրամը ֆինանսավորվել է 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տեխնիկական վերազինման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցների հաշվին, իսկ

284 957.0 հազ. դրամը՝ 2016 թվականի ընթացքում ներգրավված հավելյալ եկամուտների հաշվին:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1051-Ա որոշմամբ Հանրային հեռուստաընկերությանը սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից տրամադրված 2 509 759.1 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ հեռուստատեսային տեխնիկա:

Եվրոպական հեռարձակողների միության կողմից վերջինիս անդամակցության շրջանակներում Հանրային հեռուստաընկերությանը անհատույց տրամադրվել է 7 016.5 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ հեռուստատեսային տեխնիկա:

Շենքերի և շինությունների հիմնանորոգման նպատակով 2016 թվականին Հանրային հեռուստաընկերությունը իրականացրել է 388 719.3 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժեքով շինարարական աշխատանքներ (գլխավոր մասնաշենքի չվերանորոգված հատվածների նորոգման աշխատանքներ, գլխավոր մասնաշենքի արտաքին սանդուղքների կապիտալ շինարարական աշխատանքներ, «Երևան ստուդիա» մասնաշենքի վթարային հատվածի քանդման, կից եռահարկ աստիճանավանդակի կառուցման և չվերանորոգված հատվածների ընթացիկ նորոգման աշխատանքներ, գլխավոր մասնաշենքի տանիքի վերակառուցման աշխատանքներ և այլն), որից 200 000.0 հազ. դրամը իրականացվել է ՀՀ պետական բյուջեից շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցների հաշվին, իսկ 188 719.3 հազ. դրամը՝ 2016 թվականի ընթացքում ներգրավված հավելյալ եկամուտների հաշվին:

Տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման գործընթացը շարունակական բնույթ է կրում և յուրաքանչյուր տարի Հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է իրականացնել տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման աշխատանքներ՝ հաշվի առնելով վերոհիշյալ ուղղություններով նախատեսվող ֆինանսական միջոցներն ու առաջնահերթությունները:

5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

2016 թվականին «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունը կատարել է ռադիոհաղորդումների արտադրության ու հեռարձակման իր առաքելությունը՝ օրական հեռարձակելով հաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր» ռադիոալիք՝ 24 ժամ, «Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)՝ 24 ժամ, «Հոգևոր մշակութային» ռադիոալիք՝ 24 ժամ, արտասահմանի և Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար պատրաստվող օտարալեզու հաղորդումները՝ 3 ժամ 15 րոպե:

Հանրային ռադիոընկերության նպատակը եղել և մնում է հանրության սահմանադրական իրավունքի ապահովումը՝ հնարավորինս ընդգրկուն տեղեկություններ ստանալու քաղաքական, տնտեսական, մշակութային ու այլ կենսական ոլորտների իրադարձությունների և միտումների վերաբերյալ:

Ռադիոհաղորդումների պատրաստում

Հանրային ռադիոընկերությունը ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2016 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերությունը պատրաստել և հեռարձակել է ռադիոհաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

Աղյուսակ 6

2016 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	«Առաջին ծրագիր» ռադիոալիք, այդ թվում՝	8 784
1.1	*Լրատվական, լրատվական-վերլուծական*	*1 310*
1.2	*Քաղաքական, տնտեսական, հասարակական*	*1 348*
1.3	*Մշակութային և պատմական*	*1 438*

1.4	*Երիտասարդական*	*363*
1.5	*Մանկապատանեկան*	*542*
1.6	*Կրթական և հայոց լեզվի*	*325*
1.7	*Ժամանցային*	*814*
1.8	*Հոգևոր*	*183*
1.9	*Երաժշտական*	*1 775*
1.10	*Այլ*	*686*
2	«Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)	8 784
3	«Հոգևոր մշակութային» ռադիոալիք	8 784
4	ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի համար պատրաստվող հաղորդումներ, այդ թվում՝	1 299
4.1	*ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում հեռարձակման համար պատրաստվող (8 լեզուներով)*	*1 185*
4.2	*www.armradio.info կայք էջի համար պատրաստվող (2 լեզուներով)*	*114*

Հանրային ռադիոընկերության կողմից **«Առաջին ծրագիր»** ռադիոալիքով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են Գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. 2016 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից «Առաջին ծրագիր» ռադիոալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (%)

Հանրային ռադիոընկերությունը որդեգրել է ազգային, պետական և հանրային շահերը կարևորող ծրագրային քաղաքականություն: 2016 թվականի ընթացքում իրականացվել են եթերի բարեփոխման աշխատանքներ և սեպտեմբերի 1–ից ներկայացվել են նոր ձևաչափի ծրագրեր: Հանրային ռադիոընկերությունը պատրաստել է հաղորդումներ, որոնք անմիջականորեն վերաբերում են մշակույթին, գրական կյանքին, արվեստագետներին, երիտասարդներին, հաշմանդամների խնդիրներին, ընտանիքների անդամների և սերունդների միջև փոխհարաբերություններին և այլն: Հեռարձակվել են կրթական, դաստիարակչական, հոգևոր, ժամանցային, երաժշտական, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդմանը և ընդլայնմանը միտված և հայրենիքում սիրիահայերի ինտեգրման խնդիրներին վերաբերող հաղորդումներ: 2016 թվականին հանրության լայն շրջանակների ներգրավվածությամբ պատրաստվել են մի շարք հաղորդումներ, որոնց ուշադրության կենտրոնում են եղել հանրությանը հուզող խնդիրները՝ առողջապահություն, իրազեկվածություն և սեփական շահերի պաշտպանության մակարդակի բարձրացում, սպառողական իրավունք, էկոլոգիական խնդիրներ, գյուղացիներին հուզող հարցեր: Լուսաբանվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող առավել ուշագրավ իրադարձությունները, իրականացվել է թափուր աշխատատեղերի իրազեկման նախաձեռնությունը: Քաղաքական և տնտեսական իրադարձությունները վերլուծվել և բազմակողմանիորեն քննարկվել են տարբեր հաղորդումների շրջանակներում: Պետական, քաղաքական, սոցիալական ու մշակութային որևէ իրադարձություն դուրս չի մնացել Հանրային ռադիոընկերության տեսադաշտից: Լուսաբանվել է ՀՀ կառավարության և Ազգային ժողովի գործունեությունը:

<u>«Առաջին ծրագիր» ռադիոալիք</u>

<u>Լրատվական, լրատվական – վերլուծական հաղորդումներ</u>

Լրատվական ծառայության սկզբունքներն են՝ օպերատիվությունը, տեղեկատվության անաչառությունը և բազմակարծության ապահովումը:

«Ռադիոլուր» լրատվական-վերլուծականը «Առաջին ծրագիր» ռադիոալիքի գլխավոր լրատվական ծրագիրն է, որը համակողմանիորեն լուսաբանում է օրվա ընթացքում Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող հրատապ և ուշագրավ իրադարձությունները:

2016 թվականին «Ռադիոլուր»-ը եթեր է հեռարձակվել աշխատանքային օրերին՝ առավոտյան ժամը 8-ից մինչև 18-ը, ժամը մեկ՝ 10 րոպե տևողությամբ, իսկ շաբաթ օրերին՝ օրական երեք թողարկումով: Հիմնական հաղորդումը, որը հեռարձակվել է ժամը 18-ին, աշխատանքային օրերին տևել է 56 րոպե, իսկ շաբաթ օրը՝ 30 րոպե: Լրահոսը հայերեն, ռուսերեն, անգլերեն և ադրբեջաներեն լեզուներով տեղադրվել է www.armradio.am կայքէջում, ուր տեղադրվել են նաև գլխավոր թողարկման ձայնագրությունները:

Ռադիոլուրի սպորտային թողարկումներում ներկայացվել են մարզաշխարհի ամենակարևոր և հետաքրքիր իրադարձությունները՝ առաջնային տեղ տալով հայ մարզիկների հաղթանակներին, հայկական սպորտին առնչվող իրադարձություններին, ինչպես նաև հայկական սպորտի զարգացման նախադրյալներին և առկա խնդիրներին:

2016 թվականին շարունակվել են հեռարձակվել ՀՀ պաշտպանության նախարարության **«Ասպար»** և ոստիկանության **«Ռադիո 02»** գերատեսչական լրատվական հաղորդումները:

Ռուսալեզու լսարանի համար հեռարձակվել է **«Արմենիա»** լրատվական-վերլուծական հաղորդումը՝ աշխատանքային օրերին 15 րոպե տևողությամբ:

Մայրաքաղաքի առօրյային է հետևել **«Երևան»** տեղեկատվական-վերլուծական ծրագիրը: Հաղորդաշարը, լրագրողական հետաքննությունների ձևաչափով, լուսաբանում է մայրաքաղաքի ու նրա բնակիչների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Հաղորդաշարի շրջանակներում «Քաղաքապատում» խորագրի ներքո անդրադարձ է կատարվում Երևան քաղաքի շենքերին և պատմամշակութային արժեքներին:

<u>Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումներ</u>

«Ստատուս Քվո» քաղաքական վերլուծական հաղորդման հյուրերն են քաղաքական գործիչները, վերլուծաբանները, կառավարության տարբեր օղակներում աշխատող պետական այրերը, ԱԺ պատգամավորները: Քննարկվում են տվյալ օրվա կարևորագույն քաղաքական, տարածարջանային իրադարձությունները:

«Հայացք դրսից» հաղորդումն անդրադառնում է տնտեսական իրադարձություններին և դրանց հետևանքների վերլուծությանը:

«Մեդիաաշխարհ» հաղորդումն անդրադառնում է Հայաստանում մեդիադաշտի գործունեությանը, համեմատականներ է անցկացնում տարբեր լրատվամիջոցներով որևէ

լուրի վերաբերյալ մեկնաբանությունների և վերլուծության առանձնահատկությունների միջև: Ներկայացվում է Հայաստանում գործող լրատվամիջոցների ներկա աշխատանքը և զարգացման նախադրյալները:

«Կենսաձև» հաղորդաշարն անդրադառնում է ՀՀ քաղաքացու կենսակերպին, հասարակական կյանքում իր ներգրավվածությանն ու ունեցած դերին:

«Ամբիոն» հաղորդաշարն անդրադառնում է հասարակական, սոցիալական, մշակութային արդի հարցերին՝ ոլորտի հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ:

«Սպառողի ժամ» հաղորդաշարի նպատակն է բարձրացնել ՀՀ քաղաքացիների սպառողական իրավունքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Վերլուծվում են սպառողական իրավունքի խախտման դեպքեր, սպառողները տեղեկացվում են իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

««Կամուրջ» Հայաստան – Սփյուռք» ծրագիրն առաջնորդվում է «Հայաստանը համայն հայության հայրենիքն է» կարգախոսով: Հաղորդաշարն անդրադառնում է Սփյուռքի և հայրենիքի բազմաբնույթ կապերին՝ ընդգրկելով հայության երկու մեծ հատվածների գործնական կապերի ողջ ներկապնակը:

«Հատվող եթեր» հաղորդաշարը անդրադարձ է հանրապետության տնտեսական, հասարակական, սոցիալական արդի հարցերին՝ ոլորտի հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ:

«Ճանաչիր ինձ» հաղորդաշարը պատմում է սահմանափակ կարողություններ ունեցող անձանց առօրյայի, խնդիրների, ձեռքբերումների և ակնկալիքների մասին:

«Պատմական հայրենիք» հաղորդաշարը յուրատեսակ կամուրջ է Հայաստանի և պատմական տարածքներում ապրող կամ այնտեղից այլ երկրներ տեղափոխված հայերի միջև:

«Պատմության ակնթարթներ» հաղորդումը աուդիոֆիլմերի շարք է, որը նկարագրում և վերլուծում է պատմության տարբեր ժամանակահատվածների հիշարժան և առանցքային դրվագները:

«Անկախության պատմություն» հաղորդաշարն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության անկախության կայացման առաջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած ներքաղաքական և ներպետական իրադարձություններին և այդ

իրադարձությունների ազդեցությանը քաղաքական և հասարակական կյանքի ձևավորման գործում:

«ՀՀ անկախություն 25» հաղորդումների շարքը նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին: Հաղորդաշարի ընթացքում անդրադարձ է կատարվում անկախության 25 տարիներին Հայաստանի Հանրապետության պետականության կայացմանը և ձեռքբերումներին:

«ԼՂՀ անկախություն 25» հաղորդումների շարքը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 25-ամյակին: Հաղորդումների ընթացքում ամփոփվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացման, ձեռքբերումների, նոր մարտահրավերների մասին:

«Հայ դատ» հաղորդումների շարքն անդրադառնում է Հայաստանում և Սփյուռքում Հայ դատի կայացման հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին:

«Ցեղասպանագետներ առանց սահմանի» հաղորդումների շարքն անդրադարձ է կատարում համաշխարհային ճանաչում ունեցող ցեղասպանագետներին, նրանց գործունեությանը և ստեղծագործական կյանքին, ինչպես նաև նրանց մասնակցությանը Հայոց ցեղասպանության համաշխարհային ճանաչման գործում:

«Գերդաստաններ» հաղորդաշարը ներկայացնում է պատմություններ այնպիսի գերդաստանների մասին, որոնց ժառանգները մեծ դերակատարում են ունեցել Հայաստանի և հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածներում: Այս ընտանիքները սերնդեսերունդ մասնակից են եղել իրենց ժամանակի կարևորագույն իրադարձություններին:

«Հայկական գաղթօջախներ» հաղորդաշարը ներկայացնում է աշխարհասփյուռ հայության կյանքն ու գործունեությունը գաղթօջախներում՝ հանդիսանալով յուրահատուկ կամուրջ Հայաստանի և Սփյուռքի միջև:

«Հայկական հետքը» հաղորդումը պատմում է այն մարդկանց մասին, որոնք ունեն հայկական արմատներ և պատմության տարբեր ժամանակահատվածներում ապրել ու արարել են այլ ժողովուրդների կողքին՝ իրենց մասնակցությունն ունենալով համաշխարհային պատմության նշանակալի իրադարձություններին:

«Ազատամարտն արվեստում» հաղորդման հերոսներն են այն մարդիկ, ում ստեղծագործական կյանքում ազատամարտն ունի կարևոր և առանցքային դեր: Նրանք կոմպոզիտորներ են, գրողներ, բանաստեղծներ, նկարիչներ, քանդակագործներ և հասարակական այլ գործիչներ: Հաղորդման ընթացքում անդրադարձ է կատարվում նրանց այն ստեղծագործություններին, որոնք ստեղծվել են արցախյան ազատամարտից ոգեշնչված կամ նվիրված են հենց ազատամարտին:

«Էգո» հոգեբանական հաղորդումն անդրադառնում է հասարակության վրա տարբեր գործոնների ազդեցությանը՝ երաժշտությունից մինչև բնական երևույթներ:

«Էկոսֆերա» հաղորդումն անդրադարձ է Հայաստանի էկոլոգիական հիմնահարցերին, միջոցառումներին, հասարակական կյանքում դրա դերին ու նշանակությանը:

«Մեր մեջ ասած» հաղորդումն անդրադառնում է հասարակական և սոցիալական տարբեր երևույթների հանդեպ հասարակության անդամների բևեռացված վերաբերմունքին և քննադատություններին, ինչպես նաև հասարակության մեջ ձևավորված տարբեր կարծրատիպերին:

«Կարևոր է իմանալ» հաղորդման նպատակն է ներկայացնել կենսական նշանակության կարևոր գործառույթները, սոցիալական, իրավական և կրթական ծրագրերը, օրենքում տեղ գտած փոփոխությունները, պետություն-քաղաքացի փոխկապվածության օղակները:

«Մամուլի չտեսություն» հաղորդումն անդրադառնում է քաղաքական, հասարակական, սոցիալական, ազգային երևույթների վերլուծությանը, ներկայացնում մամուլում կամ սոցիալական ցանցերում տեղ գտած այնպիսի տեղեկություններ և նյութեր, որոնք մեծ արձագանք են ստացել հասարակության տարբեր շերտերում:

«Ձեր փաստաբանը» հաղորդումն անդրադառնում է իրավական ոլորտի հետ ՀՀ քաղաքացիների առնչությանը, իրավական փաստաթղթերի, օրենքների, իրավական ակտերի և նորմերի մեկնաբանությանը:

«Միջազգային վերլուծական ծրագիր» հաղորդումն անդրադառնում է միջազգային լուրերին և վերլուծում տարածաշրջանային անցուդարձը:

«Բիզնես բանաձև» հաղորդումն անդրադառնում է հայ գործարարներին և նրանց գործունեության ընդլայնման հեռանկարներին: Ներկայացնում է Հայաստանում տեղի

ունեցող տնտեսական, բանկային, գործարար ոլորտի նորամուծությունները, որոնք նախատեսված են հանրային օգտագործման համար:

«Ագրոաշխարհ», «Ագրոշաբաթ», «Հարցեր գյուղատնտեսից» հաղորդումները հանդիսանում են կապող օղակ գյուղացիների, ֆերմերների և գյուղատնտեսական հարցերով պատասխանատու պետական գերատեսչությունների միջև:

«Աշխատանքի բորսա» հաղորդաշարն իրազեկում է ՀՀ տարածքում թափուր աշխատատեղերի մասին՝ նպատակ ունենալով աջակցել գործազրկության մակարդակի նվազեցմանը:

«Թուրքական մամուլի տեսություն» հաղորդաշարն անդրադարձ է կատարում թուրքական մամուլում տեղ գտած այն հրապարակումներին, որոնք անմիջականորեն կապված են Հայաստանի, հայ ազգի և պատմության հետ:

«Հարթակ» հաղորդաշարը պատրաստվում է Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից: Հաղորդաշարի նպատակն է հնչեցնել հանրության կարծիքն ու փորձագետների տեսակետները հանրությանը հուզող բազմաթիվ հարցերի շուրջ:

Հասարակական այլ հաղորդումներ. 2016 թվականին Հանրային ռադիոընկերությունը լուսաբանել է Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի այցը Հայաստան՝ ապահովելով ուղիղ միացումներ այցի շրջանակում իրականացված միջոցառումների անցկացման վայրերից:

<u>Մշակութային հաղորդումներ</u>

«Վերնատուն» հաղորդմանը հյուրընկալվում են արվեստագետներ, գրականագետներ, մշակութային այլ գործիչներ: Հաղորդումն ամփոփում է մշակութային կյանքը և դրա դրսևորումները:

«Մեծանուն հայեր» հաղորդումն անդրադարձ է ազգությամբ և արմատներով հայ մեծանուն գործիչներին, որոնք մեծ դեր են ունեցել համաշխարհային մշակույթի տարբեր ճյուղերի կայացման, զարգացման և արմատական փոփոխությունների հարցում:

«Ռադիոդիմանկար» հաղորդումը ներկայացնում է մշակութային անհատականությունների դիմանկարները, նրանց կյանքն ու գործունեությունը, ապրումները, սպասումները:

«Պոեզիա» հաղորդման եթերաժամի ընթացքում Սիլվա Յուզբաշյանը ընթերցում է համաշխարհային և հայկական պոեզիա:

«Գիրք ճանապարհի» հաղորդումը ներկայացնում է նյութեր, պատմվածքներ, նամակներ, մեմուարներ, որոնք գրվել են նշանավոր մարդկանց կողմից:

«Մեր ձայնադարանի ֆոնդից» և **«Արձակի ժամ»** հաղորդումների ընթացքում եթեր են հեռարձակվում Հանրային ռադիոյի Ոսկե ֆոնդում պահպանվող գրական ժառանգություն հանդիսացող ձայնագրությունները:

«Կուլիսներ» հաղորդման հերոսները թատրոնի մարդիկ են, որոնք խոսում են թատրոնի կյանքի, բեմադրությունների ստեղծման ընթացքի և թատրոն-հասարակություն կապի մասին:

«Բարձր գրականություն» հաղորդման ընթացքում հեղինակը և հյուրը քննարկում են մեկ գիրք, փոխանակում կարծիքներ և ներկայացնում անձնական տեսակետներ գրքի ընկալման մասին:

«Ռադիո 90» հաղորդումների շարքը նվիրվել է Հանրային ռադիոյի ստեղծման 90-ամյակին: Անդրադարձ է կատարվել ռադիոյի կայացման ու զարգացման ընթացքին, ինչպես նաև պատրաստվել են թողարկումներ ռադիոյի նվիրյալների մասին:

«Մեկ դերասանի թատրոն» հաղորդման ընթացքում հնչում են ստեղծագործություններ Հանրային ռադիոյի ձայնադարանից՝ ներկայացված մեկ դերասանի կողմից:

«Գրական ընթերցումներ» հաղորդումն անդրադառնում է գրական կյանքին:

«Ժամանակի վկան» հաղորդումն անդրադառնում է այն անհատներին և իրադարձություններին, որոնք իրենց ժամանակաշրջանի խոսուն վկաներն են:

«15 րոպեն քիչ է» հաղորդումն այն մարդկանց մասին է, առանց որոնց հայ երաժշտությունն ու մշակութային կյանքը չէր լինի այսքան հարուստ ու բազմերանգ: Հաղորդման ընթացքում հնչել են Հանրային ռադիոյի ձայնադարանի ստեղծագործություններից հատվածներ:

«Հայաստանը մեր տունն է» հաղորդումը լուսաբանում է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքը, նախասիրությունները:

«Թղթապանակ N» հաղորդումն անդրադառնում է պատմության մութ էջերին և այն գաղտնի փաստաթղթերին, որոնք իրենց ժամանակին կարևոր բացահայտումներ են պարունակել:

«Գանձարան» հաղորդումը հայ նշանավոր մշակութային գործիչների մասին է: Թողարկումներում տեղ են գտել ձայնագրություններ Հանրային ռադիոյի ձայնադարանից:

«Ռադիոբեմի լույսերը» հաղորդման նպատակն է ներկայացնել ռադիոթատրոնների ետնաբեմը՝ հանրությանն անծանոթ լույսի ներքո: Հաղորդման հերոսներն են թատրոնի աշխարհի մարդիկ, ովքեր խոսում են թատրոնի մասին:

«Մի գործիքի պատմություն» հաղորդման նպատակն է ներկայացնել երաժշտական գործիքների ստեղծման պատմությունը:

Ռադիոթատրոն. 2016 թվականին Հանրային ռադիոընկերության եթերում յուրահատուկ տեղ են ունեցել Հանրային ռադիոյի ձայնադարանում պահպանվող ռադիոթատրոնները:

<u>Երաժշտական հաղորդումներ</u>

«Արմատներ» հաղորդումը ներկայացնում է հայկական ավանդույթները և ծեսերը, դրանց ծագման պատմությունն ու կիրառման գաղափարը:

«Ազգային պար» հաղորդման ժամանակ ներկայացվում են հայկական պարերը, որոնք մոռացվել են կամ պահպանվում են մինչ օրս:

«Ռետրո ակումբ» հաղորդման ընթացքում անդրադարձ է կատարվում համաշխարհային ռետրո երաժշտությանը, սիրված կատարումներին:

«Մ-զոն» հաղորդումը ներկայացնում է շաբաթվա երաժշտական իրադարձությունը, ներկայացվում են նոր թողարկված ձայնասկավառակները:

«Կիրակնօրյա երաժշտական երեկո» հաղորդման նպատակն է երաժշտությունը մատուցել՝ որպես կիրակնօրյա հանգստի կազմակերպման ուղեկից:

«Մի գավաթ սուրճ Ալիսայի հետ» հաղորդման հերոսներն են նշանավոր երաժիշտներն ու հեղինակները: Մեկ գավաթ սուրճի շուրջ է ընթանում զրույցը իրենց կյանքի, գործունեության և ձեռքբերումների մասին:

«Կամերտոն» հաղորդումը դասական ստեղծագործությունների յուրատեսակ մեկնաբանություն է մասնագետների և ոչ մասնագետների տեսանկյուններից:

«Հանրային շաբաթ» հաղորդումը շաբաթական մեկ անգամ ուղիղ եթերում ներկայացնում է ժամանցային նյութեր և երաժշտություն:

«Համերգ Ձեր ցանկությամբ» հաղորդումն իրականացվում է ուղիղ եթերում ռադիոլսողների երաժշտական պատվերների հիման վրա:

«Ջազ մուդ» հաղորդումն անդրադառնում է համաշխարհային ջազ կատարողներին: Ծրագրի ընթացքում հնչում են ջազային կատարումներ:

Երաժշտական այլ հաղորդումներ. 2016 թվականին Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերում շարունակվել է **«Էտյուդներ», «Երաժշտությունը և մենք»** հաղորդումների հեռարձակումը: Կիրակնօրյա եթերում ուղիղ միացման միջոցով հեռարձակվել են Հանրային հեռուստաընկերության **«Երաժշտական փոստարկղ»** և **«Երգ երգոց»** երաժշտական հաղորդումները: Հանրային ռադիոն հեռարձակել է նաև «Եվրատեսիլ» և «Մանկական Եվրատեսիլ» երաժշտական մրցույթները: Եթերում հնչել են ազգագրական, ժողովրդական, դասական կատարումներ, որոնք յուրովի համեմել են եթերը:

Հանրային ռադիոընկերության կազմում գործում են չորս երաժշտական կոլեկտիվներ. **Արամ Մերանգուլյանի** անվան ժողովրդական գործիքների անսամբլը, **«Սայաթ Նովա»** աշուղական երգի անսամբլը, **«Արևիկ»** մանկապատանեկան անսամբլը, **Էստրադային սիմֆոնիկ** նվագախումբը:

<u>Երիտասարդական հաղորդումներ</u>

«Գտիր քո բուհը» հաղորդման նպատակն է օգնել շրջանավարտներին և երիտասարդներին մասնագիտության ընտրության հարցում:

«Լյուն-Սե» հաղորդման նպատակն է երիտասարդ ռադիոլսողներին տեղեկացնել երիտասարդների համար կազմակերպվող միջոցառումների, ցուցահանդեսներին մասին, ինչպես նաև ներկայացնել երիտասարդ ստեղծագործողներին:

<u>Կրթական և հայոց լեզվի հաղորդումներ</u>

«Մենք և մեր բառերը» հաղորդման շրջանակում քննության առարկան հայերենն է՝ որպես խոսակցական, գրական, թարգմանչական լեզու: Հաղորդումը ուսումնասիրում է բառերի ծագումնաբանությունը, ներկայացնում ասացվածքներ և դրանց փոխարժեքները այլ լեզուներում, վերլուծում տարբեր լեզուներով դրանց ընկալման տարբերությունները:

«Խոսենք հայերեն» հաղորդման ընթացքում քննարկվում են խոսակցական հայերենում կիրառություն գտած ոճաբանական սխալները և հիմնավորումներով ներկայացվում ճիշտ տարբերակները:

«Դպրություն» հաղորդումն անդրադառնում է հանրակրթական դպրոցին, դրա առօրյային, կրթական և արտադասարանային ծրագրերին:

<u>Մանկապատանեկան հաղորդումներ</u>

Մանկապատանեկան հաղորդումները (**«Զարթուցիչ»**, **«Հայթեք»**, **«Երեք ույու չորս»**, **«Պստիկաշեն»)** ուղղված են տարբեր տարիքային խմբերին՝ ամենափոքրերից մինչև պատանեկան: Կրթադաստիարակչական և տեղեկատվական գործառույթների շնորհիվ հաղորդման հեղինակները ձգտել են բավարարել երեխաների ինֆորմացիոն և կրթական հետաքրքրասիրությունը:

«Ապագայի անուններ» հաղորդումը շնորհաշատ դեռահասների մասին է, որոնք իրենց ճանապարհն են հարթում երաժշտության, մշակույթի, արվեստի սպորտի և այլ բնագավառներում:

<u>Ժամանցային հաղորդումներ</u>

«Առավոտը հանրայինում» ժամանցային, տեղեկատվական հաղորդումը տարբեր թեմատիկ խորագրերով իրականացվում է ուղիղ եթերում՝ հրավիրված հյուրերի և ռադիոլսողների անմիջական մասնակցությամբ:

«Խելք խելքի» հաղորդումն ինտելեկտուալ ռադիոշոու է ռադիոլսողների ներգրավմամբ՝ միտված երիտասարդների շրջանում գիտելիքի, իմացության և տրամաբանության զարգացմանը:

«Երգի պատմություն» հաղորդումն անդրադառնում է երգերի ստեղծման, տարածման և հանրայնացման պատմությանը:

«Ճամփորդի ուղեցույց» հաղորդման նպատակն է նախքան այլ պետություն մեկնելը ճամփորդներին ծանոթացնել այդ երկրի տեսարժան վայրերին, ավանդույթներին և առանձնահատկություններին, ինչպես նաև տվյալ երկրում զբոսաշրջիկների իրավունքներին:

«Կեսգիշերից առաջ»-ը ժամանցային հաղորդում է, որը պարունակում է պատմամշակութային ու հոգևոր ակնարկներ, պատմություններ, հետաքրքիր հարցազրույցներ՝ համեմված տարբեր ոճի երաժշտությամբ:

«Երիտասարդական ժամանց» հաղորդման նպատակն է երիտասարդներին տեղեկացնել շաբաթվա իրադարձությունների մասին՝ փառատոնների, ցուցահանդեսների, մարզային միջոցառումների, սեմինարների և այլն:

<u>Հոգևոր հաղորդումներ</u>

«Ավետիս», **«Շողակն Արարատյան»**, **«Մանանա»** հոգևոր հաղորդումները պատրաստվում են Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի հետ համագործակցությամբ: Հաղորդումների գլխավոր նպատակն է ծանոթացնել հայ եկեղեցու պատմությանը, եկեղեցական ծեսերին և տոնակատարություններին: Ռադիոունկնդիրները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու հոգևոր կյանքին ու խոսքին: Հոգևոր հաղորդումներին մասնակցում են հոգևորականներ, հոգեբաններ և ազգագրագետներ:

«Ընթերցումներ Մատյանից» հաղորդման ընթացքում ընթերցվում են հատվածներ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգություն» պոեմից:

<u>Այլ հաղորդումներ</u>

Հանրային ռադիոյի «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերում հեռարձակվել են նաև առողջապահական և մարզական հաղորդումներ: Առողջապահական հաղորդումներից 2016 թվականին ներկայացվել են «Ես առողջ եմ», «Մոր և մանկան անկյուն» և «Երկու սերունդ» հաղորդաշարերը:

«Ես առողջ եմ» հաղորդաշարը հանդիսանում է մասնագետի և ՀՀ քաղաքացու միջև կապօղակ, որով ռադիոլսողները ձեռք են բերում գիտելիք և հետադարձ կապի միջոցով ստանում խորհրդատվություններ:

«Մոր և մանկան անկյուն» հաղորդաշարը անդրադառնում է ծնող-երեխա հարաբերություններին, խնդիրների երկկողմանի հաղթահարմանը:

«Երկու սերունդ» հաղորդաշարը անդրադառնում է դեռահասներին հուզող խնդիրներին, հասարակությունում նրանց ինտեգրման դժվարությունների հաղթահարմանը:

Մարզական ծրագրերի շրջանակներում Հանրային ռադիոյի «Առաջին ծրագիր» ռադիոալիքի ուղիղ եթերում հեռարձակվել են **ֆուտբոլի Եվրոպայի առաջնության** հանդիպումները:

<u>«Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)</u>

Հանրային ռադիոընկերության **«Երկրորդ ծրագիր»** ռադիոալիքը **(«Իմ ռադիո»**-ն**)** միտված է մատուցելու բազմաժանր ու բազմաոճ երաժշտական, ժամանցային, հետաքրքիր ծրագրեր երիտասարդների համար: Եթերում ներկայացվում են անցյալի մեծ վարպետների, ժամանակակից հայ և օտարազգի կատարողների լավագույն ստեղծագործությունները:

<u>«Հոգևոր մշակութային» ռադիոալիք</u>

Երևան քաղաքում և հարակից շրջաններում եթեր է հեռարձակվել «Հոգևոր մշակութային» ռադիոալիքը: Ռադիոալիքի եթերով մասնավորապես հեռարձակվել են «Գանձասար», «Ակունք», «Աշխարհայացք», «Հայելի», «Ծնողական ժողով», «Համաշխարհային դասական երաժշտություն», «Հոգևոր զրույցներ», «Մեկնություն», «Տաղարան», «Սիրաքի իմաստություն», «Մտորումներ», «Կրոն և մշակույթ», «Հայ կոմպոզիտորներ և կատարողներ», «Նոր գրքեր», «Մեր կինոն», «Հայկական վանքեր և սրբատեղիներ», «Երաժշտական թատրոնի գոհարներ» հոգևոր-մշակութային հաղորդումները և հաղորդաշարերը, որոնք ուղեկցվել են հայ և համաշխարհային դասական կոմպոզիտորների ստեղծագործություններով:

<u>ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի համար պատրաստվող հաղորդումներ</u>

2016 թվականի ընթացքում ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի լսարանի համար 10 լեզուներով պատրաստվել են **«Երևանի ձայն»** ամենօրյա լրատվական հաղորդումները: Հաղորդումներն օտարներին և աշխարհասփյուռ հայությանն են ներկայացրել հայաստանյան իրադարձությունները, ծանոթացրել Հայաստանի պատմությանը, արծարծել Արցախի հիմնախնդրի կարգավորմանը, Հայ դատին և ցեղասպանության ճանաչմանը վերաբերող հարցեր: Արտասահմանի համար պատրաստվող

օրվա բոլոր հաղորդումների ձայնագրությունները և տեքստերը տեղադրվում են Հանրային ռադիոընկերության www.armradio.info կայքէջում, ինչը ունկնդրին հնարավորություն է ընձեռում հաղորդումները կարդալ ու լսել օրվա ցանկացած ժամի: Հաղորդումներից 2-ը՝ ռուսերեն և անգլերեն տեղադրվում են միայն կայքէջում, իսկ 8-ը՝ պարսկերեն, եզդիերեն, քրդերեն, ասորերեն, հունարեն, ադրբեջաներեն, թուրքերեն և արաբերեն նաև հեռարձակվում են միջին և կարճ ալիքներով Մերձավոր Արևելքի և հարևան երկրների լսարանի համար:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզուներով (եզդիերեն, քրդերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն՝ 30 րոպե, ասորերեն, հունարեն, ադրբեջաներեն՝ 15 րոպե) հաղորդումներն ամեն օր հեռարձակվում են նաև Հայաստանի տարածքում:

<u>Ռադիոհաղորդումների հեռարձակում</u>

2016 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվել են սահմանված որակական և տեխնիկական չափանիշներին համապատասխան: «Առաջին ծրագիր» ռադիոալիքը հեռարձակվել է ՀՀ ողջ տարածքում օրական 24 ժամ՝ գերկարճ տիրույթի հաճախականություններով (Երևանում՝ 107.7 ՄՀց): «Իմ ռադիո» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և Երևանի հարակից շրջաններում օրական 24 ժամ՝ 103.8 ՄՀց հաճախականությամբ: «Հոգևոր մշակութային» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և Երևանի հարակից շրջաններում՝ օրական 24 ժամ՝ 91.1 ՄՀց հաճախականությամբ:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար նախատեսված հաղորդումները 8 լեզուներով՝ ասորերեն, հունարեն, քրդերեն, եզդիերեն, թուրքերեն, ադրբեջաներեն, պարսկերեն և արաբերեն հեռարձակվել են Երևանում և հարակից շրջաններում՝ գերկարճ տիրույթի հաճախականությունով: Հաղորդումները նաև հեռարձակվել են Մերձավոր Արևելքի և ՀՀ հարևան երկրներում՝ միջին և կարճ ալիքներով: Ռուսերենով օրվա լրահոսը ռուսախոս ազգային փոքրամասնությունների համար հեռարձակվել է «Առաջին ծրագիր» ռադիոալիքի հիմնական եթերով:

ՀՀ Ազգային ժողովի դռնբաց նիստերը ուղիղ եթերով հեռարձակվել են Երևանում և հարակից շրջաններում գերկարճ 69.7 ՄՀց հաճախականությունով:

Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» և «Ռադիո» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով, ինչպես նաև Հանրային ռադիոընկերության սեփական տեխնիկական միջոցներով:

Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվել է նաև առցանց՝ www.armradio.am կայքէջով:

<u>Ֆինանսատնտեսական գործունեություն</u>

Հանրային ռադիոընկերությունը 2016 թվականին իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից, եթերաժամանակի տրամադրումից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման, ինչպես նաև շենքի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հանրային ռադիոընկերությանը հատկացվել է՝

- 08.03.01.03 «Ռադիո ծառայություններ» ծրագրով՝ 785 304.1 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),
- 08.03.01.12 ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում» ծրագրով՝ 70 000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության կողմից 2016 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 7

2016 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	ՀՀ պետական բյուջեի ընթացիկ դրամաշնորհից եկամուտ	785 304
2	Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	22 114
3	Առևտրային եկամուտներ, այդ թվում՝	61 621
3.1	*Առևտրային գովազդից եկամուտ*	*36 380*
3.2	*Վարձավճարներից եկամուտ*	*25 241*
4	Այլ եկամուտ	4 532
Ընդամենը		**873 571**

Աղյուսակ 7-ի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցներով ձեռք բերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2016 թվականին Հանրային ռադիոընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության 2016 թվականի գործունեության ընթացքում կատարված փաստացի ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 8

2016 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	516 972
2	Հեռարձակման ծախսեր	134 081
3	Ռադիոհաղորդումների ձեռքբերման ծախսեր	49 453
4	Մաշվածք և ամորտիզացիա	93 658
5	Ակտիվների արժեզրկում	195 827
6	Այլ ծախսեր	48 202
Ընդամենը		**1 038 193**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 49.8%-ը և ներառել է հաստիքային աշխատողների և ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 12.9%-ը և ներառել են ՀՀ տարածքում և արտասահմանում հեռարձակման, ինչպես նաև ինտերնետային առցանց հեռարձակման ծախսերը:

Ռադիոհաղորդումների ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 4.8%-ը և ներառել են հիմնականում հոգևոր մշակութային ռադիոալիքի համար ձեռքբերվող հաղորդումների և հաղորդաշարերի ինքնարժեքը:

Մաշվածքի ու ամորտիզացիոն ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 9.0%-ը, իսկ ակտիվների արժեզրկումը՝ 18.9%-ը: Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 4.6%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների ու նյութերի, արտադրական նյութերի ու պահեստամասերի, լրատվության ու այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական ու ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, շենքերի ու շինությունների պահպանման, կապի ու կոմունալ ծառայությունների ձեռքբերման, աուդիտի, գործուղման ծախսերը, հարկերն ու տուրքերը (ներառյալ շահութահարկի գծով ծախսը և հետաձգված հարկերի գծով փոխհատուցումը), ինչպես նաև այլ ֆինանսական ծախսերը:

Այսպիսով, 2016 թվականին Հանրային ռադիոընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ վնասը կազմել է 164 622.0 հազ. դրամ: Վնասի առաջացումը հիմնականում պայմանավորված է Հանրային ռադիոընկերության շենքերի և հողամասերի արժեզրկումից առաջացած վնասով:

2016 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 143 687.1 հազ. դրամ:

2015 թվականի գործունեության արդյունքներով Հանրային ռադիոընկերությունը ՀՀ պետական բյուջե է վճարել 3 232.6 հազ. դրամ շահութաբաժին:

2016 թվականին կատարվել են շենքի և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ, ինչպես նաև ձեռք են բերվել համակարգչային և հեռարձակման համար

նախատեսված տեխնիկական միջոցներ, գրասենյակային գույք և այլ հիմնական միջոցներ՝ 159 599.2 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից շենքի հիմնանորոգման նպատակով ստացված 70 000.0 հազ. դրամ կապիտալ դրամաշնորհի միջոցները Հանրային ռադիոընկերությունը ուղղել է 2013-2014 թվականների ընթացքում իրականացված հիմնանորոգման աշխատանքների փոխհատուցմանը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի N 126-Ա որոշմամբ՝ Երևան քաղաքի Տերյան 2 հասցեում գտնվող 198.6 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենքը և դրա զբաղեցրած 0.0195 հեկտար հողատարածքը՝ 98 633.0 հազ. դրամ գնահատված շուկայական արժեքով ներդրվել է Հանրային ռադիոընկերության կանոնադրական կապիտալում:

6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2016 թվականին «Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական հեռարձակել է 18 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ:

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերության պատրաստած հաղորդումները ներկայացնում են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը, երկրի արդի մշակութային կյանքը՝ թիրախ ունենալով ազգային ու համամարդկային հոգևոր բարոյական արժեքների քարոզչությունը: Առանձին հաղորդումներով ու հաղորդաշարերով ներկայացվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ դերը հայկական մշակույթի, ազգային ավանդույթների ձևավորման, պահպանման ու հանրահռչակման գործում:

Հեռուստահաղորդումների պատրաստում

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական

ակտերով: Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերությունը պատրաստել և հեռարձակել է 6 570 ժամ հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

Աղյուսակ 9

2016 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	Մշակութային լրատվություն	418
2	Մշակութային հաղորդումներ	1 835
3	Հոգևոր հաղորդումներ	964
4	Երաժշտական ծրագրեր և համերգներ	910
5	Մանկական հաղորդումներ	770
6	Ուսումնական և այլ հաղորդումներ	745
7	Գիտահանրամատչելի, ուսումնական, վավերագրական կինոնկարներ	928
Ընդամենը		**6 570**

Հոգևոր–մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են Գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4. Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները (%)

<u>Մշակութային լրատվություն</u>

Մշակութային լրատվության հաղորդումներից պատրաստվել և հեռարձակվել են **«Մշակութային ազդագիր»** և **«Ձայնագիր»** հաղորդաշարերը, որոնք իրենց հիմնական թողարկումներում և հավելվածներում ներկայացրել են բազմաժանր ծրագրեր հեռուստադիտողների տարբեր տարիքային խմբերի համար: «Ձայնագիր» հեռուստահաղորդաշարը լուսաբանել է Հայաստանի երաժշտական կյանքը, ներկայացրել երևանյան համերգասրահներում կազմակերպված ժողովրդական, աշուղական, ակադեմիական և ժամանակակից երաժշտության նշանակալից միջոցառումները: 2016 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են Հայաստանում կայացած մի շարք երաժշտական փառատոններ՝ «Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնը, «Երևանյան հեռանկարներ» միջազգային փառատոնը, «Երևանյան միջազգային 10-րդ փառատոնը», Կոմիտասյան փառատոնը, «Ազգային պատկերասրահ» միջազգային փառատոնը, Արամ Խաչատրյան դիրիժորական մրցույթ-փառատոնը, «Գութան» ազգագրական երգի փառատոնը, «Հուսո առագաստ» հեղինակային երգի փառատոնը: Լուսաբանվել են ՀՀ Նախագահի մրցանակի համար դասական երաժշտության մրցույթը, «Նոր անուններ պատանի երաժիշտ կատարողների 6-րդ» միջազգային մրցույթը, Գյումրիի Ռոքֆեստ, ջազ և ռոք այլ փառատոններ: Ներկայացվել են նաև միջազգային հռչակ վայելող

նվագախմբերի, դիրիժորների և կատարողների մասնակցությամբ, հայկական, եվրոպական հոգևոր երաժշտության, ազգային երաժշտության, ավանդական երգ ու պարի համույթների, աշուղական երաժշտական համույթների և «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ 90», Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 90 ամյակին, Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի 75 ամյակին նվիրված համերգները: Տարվա ընթացքում ներկայացվել են հայ երաժշտության երախտավորների՝ Նիկողայոս Տիգրանյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Հարո Ստեփանյանի, Տաթևիկ Սազանդարյանի, Առնո Բաբաջանյանի, Միքայել Թարիվերդիևի, Էդուարդ Միրզոյանի, Տիգրան Մանսուրյանի, Դանիել Երաժշտի, Վարդան Աճեմյանի, Պետրոս Ժամկոչյանի հոբելյաններին նվիրված հետևյալ ստեղծագործական երեկոներն ու համերգները:

«Մշակութային ազդագիր» հաղորդաշարն իր լսարանին ներկայացրել է հանրապետության պատկերասրահներում, ցուցասրահներում ու թանգարաններում անցկացվող միջոցառումները, լուսաբանել մշակույթի ոլորտում վաստակ ունեցող անձանց գործունեությունը:

2016 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են հայաստանյան թատրոնների պրեմիերաներն ու խաղացանկերը: «Մշակութային ազդագիրը» հիմնական ու հատուկ թողարկումներով թատերասեր հանդիսատեսին հնարավորություն է տվել հետևել Հայաստանում կազմակերպված բոլոր կինո և թատերական փառատոններին՝ «Ոսկե ծիրան» 13-րդ միջազգային փառատոն, բրիտանական ֆիլմերի 14-րդ փառատոն, Ճապոնական ֆիլմերի փառատոն, «Մեկ կադր» կարճ ֆիլմերի միջազգային 14-րդ փառատոն, «Ես եմ» միջազգային երիտասարդական փառատոն, «Մալենտո» միջազգային կինոփառատոն, «Ռոլան» մանկական ֆիլմերի 12-րդ միջազգային փառատոնը, «Դիալոգոս» պատերազմների մասին ֆիլմերի փառատոն, Նորարական փորձառական արվեստի կենտրոնում (ՆՓԱԿ) կազմակերպված «Թատրոն իքս» հանրապետական փառատոն, «Երկնքից 3 խնձոր ընկավ...» հեքիաթասացության և բարբառի 8-րդ փառատոն, «Գրական տապան» միջազգային փառատոն, «Հայֆեստ» միջազգային թատերական փառատոն, «Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի միջազգային 2-րդ փառատոն, «ՌեԱնիմանիա» անիմացիոն կինոյի և պատկերապատման արվեստի միջազգային 8-րդ փառատոն, «Ժողովուրդների բարեկամություն» միջազգային մանկապատանեկան ստեղծագործական մրցույթ-փառատոն,

«Արմմոնո» միջազգային թատերական ամենամյա 14-րդ փառատոն, Տիկնիկային թատրոնների երևանյան միջազգային փառատոն, Կատարողական արվեստների փառատոն, «Արտ-ֆեստ 2016» երիտասարդական միջազգային 4-րդ բաց փառատոն, Մանկական ներկայացումներ փառատոն, «Շունն ու կատուն» բալլադի 130 ամյակին նվիրված մանկապատանեկան թատերախմբերի փառատոն, Հայ-իրանական «Խաղաղություն և բարեկամություն» մանկապատանեկան փառատոն, Շեքսպիրյան փառատոն 2016, «Արևորդի» 6-րդ բնապահպանական փառատոն, Տիկնիկային թատրոնների միջազգային 11-րդ փառատոն, «Թատերական ռեժիսուրա» երիտասարդական փառատոն, Մանկապատանեկան արվեստի 2-րդ ինտեգրատիվ /ներառական/ հանրապետական փառատոն:

«Մշակութային ազդագիր» հաղորդաշարը հատուկ թողարկումներով ներկայացրել է նաև փորձարարական արվեստն ու երիտասարդ ստեղծագործողներին, անդրադարձել գրքի ու գրահրատարակչության ոլորտի խնդիրներին ու կազմակերպված միջոցառումներին:

«Թեմա»-ն մշակութային թեմաներով տաղավարային հաղորդաշար է, որը հեռարձակվում է յուրաքանչյուր շաբաթ՝ 45 րոպե տևողությամբ:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը համագործակցում է «Շողակաթ» հեռուստաընկերության հետ, որի պատրաստած հոգևոր-մշակութային և հոգևոր-եկեղեցական հաղորդումները համահունչ են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության ծրագրային քաղաքականությանը: 2016 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը «Շողակաթ» հեռուստաընկերության հետ համագործակցության արդյունքում իր եթերով հեռարձակել է մի շարք հաղորդումներ, մասնավորապես՝

<u>Մշակութային հաղորդումներ</u>

- **«Գիրք ճանապարհի»** - հայ գրականության պատմության մեջ շրջադարձային արժեք ունեցող գրական գործերի մասին,
- **«Հանրագիտարան»** - հայ և համաշխարհային գիտության, արվեստի ու հասարակական կյանքի մեծերի մասին տեսահանրագիտարան,

- **«Կադրից դուրս»** - հայ և համաշխարհային կինոգործիչների մասին պատմող հաղորդաշար,
- **«Թանգարաններ»** - Հայաստանում գործող թանգարանները ներկայացնող հաղորդաշար,
- **«Հայտնի և անհայտ կինո»** - հանրահայտ ռեժիսորների կյանքն ու գործունեությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Նկարիչ»** - հայ ժամանակակից նկարիչների մասին պատմող հաղորդաշար,
- **«Փորձասենյակ»** - Հայաստանում գործող երաժշտական խմբերի մասին պատմող հաղորդաշար,
- **«Ներուժ»** - Մանկապատանեկան ստեղծագործական կրթօջախների գործունեությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Երկու ընկեր»** - ժամանակակից հայ մտավորականները ներկայացնում են բարոյական այն արժանիքները, որ կարևորում են մարդու մեջ, հատկապես ընկեր ընտրելիս,
- **«Սիրելով... »** - մշակութային հաղորդաշար (սիրելով գիրքը, սիրելով պարը, սիրելով երաժշտությունը և այլն),
- **«Հանիրավի մոռացվածները»** - հայ մշակույթի մոռացված գործիչների մասին պատմող վավերագրական հեռուստաֆիլմ:

<u>Հոգևոր հաղորդումներ</u>

- **«Եկեղեցական կյանք»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական կյանքի լուսաբանում,
- **«Հիսուսի հրաշքներն ու բժշկումները»** - անիմացիոն հաղորդաշար, որում հայ և եվրոպական մանրանկարչության միջոցով ներկայացվում են Նոր Կտակարանում նկարագրված Տերունական հրաշքները,
- **«Հարցեր քահանային»** - քահանան պատասխանում է հեռուստադիտողների հարցերին,
- **«Հայրս քահանա է»** - քահանայի մասին պատմում են ընտանիքի անդամները,

- **«Աստված իմ մեջ»** - գիտնականները, արվեստագետները և մշակույթի այլ գործիչները խոսում են հավատքի և հոգևորի մասին,
- **«Դեպի եկեղեցի»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատացյալները վկայում են իրենց հավատքը, ներկայացնում իրենց փորձառությունը,
- **«Հայ Առաքելական Եկեղեցու խորհուրդները»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծեսերի խորհուրդն ու մեկնությունը,
- **«Խորհուրդ խորին»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Պատարագի մեկնությունը,
- **«Հավատի կյանք»** - ուխտի օր ունեցող եկեղեցիների համայնքային կյանքը,
- **«Քահանայի հուշապատում»** - ավագ սերնդի քահանաների հուշերը,
- **«Տոնացույց»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոներն ու դրանց խորհուրդը մեկնող հաղորդաշար:

<u>Երաժշտական ծրագրեր և համերգներ</u>

Երևանի տարբեր համերգասրահներում տեսագրվել և հեռարձակվել են մի շարք համերգային ծրագրեր՝ Հայաստանի պետական նվագախմբերի մասնակցությամբ:

<u>Մանկական հաղորդումներ</u>

- **«Հին ու նոր հեքիաթներ»** - անիմացիոն մանկական հաղորդաշար՝ իրիկնային հեքիաթ,
- **«Ճամփաներ»** - մանկապատանեկան կրթական, դաստիարակչական հաղորդաշար,
- **«Մանուկ դպիրներ»** - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում ծառայող մանուկների մասին. ովքեր են և ինչ արժեհամակարգում են մեծանում,
- **«Պատումիկներ Աստվածաշնչից»** - անիմացիոն հաղորդաշար, որը մանուկների համար ներկայացնում է Աստվածաշնչյան առանձին պատմություններ,
- **«Ինչն ինչոց է ըստ Պիստակի»** - մանկական անիմացիոն հանրագիտարան,
- **«ՕԳԳ»** - մշակութային տարբեր խմբակների գործունեությունը ներկայացնող մանկապատանեկան հաղորդաշար:

Ուսումնական և այլ հաղորդումներ

- **«Ազգապատում»** - Հայ ժողովրդի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը ներկայացնող հաղորդաշար,
- **«Առաքինություններ»** - հաղորդաշարը ներկայացնում է բարոյական արժեքների դերը մարդու կյանքում,
- **«Նվիրյալ անձեր»** - հաղորդաշարը ներկայացնում է հայ ժամանակակից գիտության և մշակույթի երևելիների կյանքն ու գործունեությունը,
- **«Հայը»** - հաղորդաշարում ներկայացվում է հայ մշակույթի երևելիների կարծիքը հայերի մասին,
- **«Երրորդ հազարամյակ»** - հաղորդաշարում հասարակական գործիչներն ու գիտնականները քննարկում են մշակութաբանական թեմաներ,
- **«Դեպի տուն»** - հաղորդաշարում հայրենիք վերադարձած հայերը պատմում են իրենց գերդաստանի պատմությունը և խոսում հայրենիք վերադառնալու պատճառների մասին,
- **«Օր վեցերորդ»** - հաղորդաշարում հոգևորականը մշակույթի և հասարակական գործիչների հետ զրուցում է օրվա հրատապ թեմաների մասին,
- **«Տարբերակ»** - հաղորդաշարը տաղավարային հաղորդում է, ուր քննարկվում են սոցիալական ու բարոյական խնդիրներ:

Հեռուստահաղորդումների հեռարձակում

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության հաղորդումները «Շողակաթ» հեռուստաալիքով հեռարձակվում են ՀՀ ամբողջ տարածքում: Հեռարձակումը իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով: Մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսը անալոգային հեռարձակմանը զուգահեռ իրականացվել է նաև թվային հեռարձակում, իսկ 2016 թվականի նոյեմբեր ամսից սկսած ՀՀ ողջ տարածքում իրականացվել է միայն թվային հեռարձակում:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը 2016 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի հաշվին:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը այլ աղբյուրներից, մասնավորապես՝ առևտրային գովազդից և հովանավորչությունից դրամական մուտքեր չի ունեցել՝ հաշվի առնելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3.1 կետի պահանջը, համաձայն որի՝ Հանրային հեռուստառադիոընկերության հոգևոր-մշակութային ուղղվածության հեռուստաալիքով գովազդի հեռարձակումը արգելվում է:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման ֆինանսավորման նպատակով Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությանը «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.10 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով հատկացվել է 150 173.7 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից 2016 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 10

2016 թվականին Հոգևոր մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ.դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	ՀՀ պետական բյուջեի ընթացիկ դրամաշնորհից եկամուտ	150 174
2	Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	2 543
Ընդամենը		**152 717**

2016 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը պետական բյուջեից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Աղյուսակ 11-ում ներկայացված են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության 2016 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 11

2016 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ.դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	74 852
2	Հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսեր	23 660
3	Հեռարձակման ծախսեր	50 296
4	Հիմնական միջոցների մաշվածք	2 543
5	Այլ ծախսեր	1 366
Ընդամենը		**152 717**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 49.0%-ը և ներառել է հաստիքային աշխատողների և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռք բերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 15.5%-ը, հեռարձակման ծախսերը՝ 32.9%-ը, հիմնական միջոցների մաշվածքի ծախսերը՝ 1.7%-ը, իսկ այլ ծախսերը՝ 0.9%-ը:

2016 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 16 991.0 հազ. դրամ:

7. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

2016 թվականին «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲ ընկերությունը շարունակել է Շիրակի մարզում հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և հեռարձակել է միջինում օրական 17 ժամ 50 րոպե տևողությամբ հեռուստահաղորդումներ և 24 ժամ տևողությամբ ռադիոհաղորդումներ:

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստում

Շիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իր կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով: 2016 թվականի ընթացքում հեռարձակվել են 6 532 ժամ հեռուստահաղորդումներ և 8 784 ժամ ռադիոհաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

Աղյուսակ 12

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հեռուստահաղորդումների ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հեռարձակված հեռուստահաղոր-դումների ծավալները (ժամ)	Հեռարձակված ռադիոհաղորդում-ների ծավալները (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	1 064	1 104
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	79	51
3	Հոգևոր-մշակութային	267	284
4	Երիտասարդական	56	-
5	Մանկական	28	43
6	Երաժշտական, ժամանցային	4 554	6 699
7	Մարզական	73	-
8	Այլ հաղորդումներ	411	603
Ընդամենը		**6 532**	**8 784**

Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հաղորդումների ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են Գծապատկեր 5-ում և Գծապատկեր 6-ում:



Գծապատկեր 5. 2016 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հեռուստահաղորդումների ծավալները (%)



Գծապատկեր 6. 2016 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված ռադիոհաղորդումների ծավալները (%)

Հեռուստահաղորդումներ

Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներ

«Օրագիծ» լրատվական ծրագիրը բազմակողմանիորեն լուսաբանում է օրվա ընթացքում Շիրակի մարզում և Գյումրիում տեղի ունեցած հրատապ և ուշագրավ իրադարձությունները, ինչպես նաև անդրադառնում Հայաստանում և աշխարհում կատարվող տնտեսական, քաղաքական, մշակութային ու միջազգային իրադարձություններին: 2016 թվականին աշխատանքային և շաբաթ օրերին ծրագիրը եթեր է հեռարձակվել օրական 7 հաղորդումով՝ 30 րոպե միջին տևողությամբ: Կիրակնօրյա **«Հետագիծ»** լրատվական-վերլուծականը հեռարձակվել է օրական 3 անգամ և ներկայացրել է շաբաթվա ընթացքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները:

Քաղաքական, տնտեսական և հասարակական հաղորդումներ

Քաղաքական, տնտեսական և հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդումներից հեռուստադիտողին են ներկայացվել **«Դիմագիծ»** և **«Դեմքեր»** հաղորդաշարերը, որոնց շրջանակներում հրավիրված քաղաքական գործիչների, այս կամ այն ոլորտի պատասխանատուների հետ անդրադարձ է կատարվել մարզին առնչվող տարբեր խնդիրներին, ձեռքբերումներին, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, իրավական, առողջապահական և այլ ոլորտներում առկա հիմնախնդիրներին: Հաղորդաշարերի նպատակն է վեր հանել քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում հասարակությանը հուզող խնդիրները և քննարկումների միջոցով առաջարկել լուծումներ:

Հոգևոր-մշակութային հաղորդումներ

«Ես և դու» հաղորդաշարը բացահայտում է հարուստ ներաշխարհով մարդկանց և հանրությանն է ներկայացնում նրանց տեսակետները տարբեր հարցերի շուրջ: Հաղորդաշարի հյուրերն են Գյումրի քաղաքում և հանրապետությունում հայտնի արվեստագետներ, հոգեբաններ, փիլիսոփաներ և այլ մտավորականներ: Հաղորդաշարը նաև ընթերցանության խթանմանն ուղղված յուրահատուկ նախագիծ է: Հաղորդաշարի

հյուրերն իրենց օրինակով նպաստում են հասարակության մեջ գիրք նվիրելու ավանդույթի վերականգնմանը:

«Շիրակ Ջազ». 2016 թվականին Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում հեռարձակվել է «Շիրակ Ջազ» նոր հաղորդաշարը, որը հայ և համաշխարհային ջազային կատարողների կյանքի ու կենսագրության մասին պատմող հաղորդաշար է:

«Աստվածաշունչը՝ փոքրիկներին» հաղորդումն ունի ուսուցողական, ուսումնադաստիարակչական նշանակություն: Այն մատչելի ձևով մանուկներին ներկայացնում է Աստվածաշունչը, մանրամասն ծանոթացնում աստվածաշնչյան դեպքերին ու կերպարներին: Հաղորդաշարը ծառայում է երեխաների բարոյահոգեբանական ճիշտ դաստիարակմանը, արմատավորում է հարգանք և սեր քրիստոնեության, Հայ Առաքելական Եկեղեցու, հայրենիքի և մշակույթի հանդեպ:

«Համով ռինգ» հաղորդաշարը խոհարարական մրցույթ-հաղորդում է ամենատարբեր ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հաղորդման նպատակն է հեռուստադիտողներին ներկայացնել խոհարարական արվեստի նրբությունները, ինչպես նաև բացահայտել տարբեր ազգային խոհանոցների գաղտնիքները:

<u>Երիտասարդական հաղորդումներ</u>

«Շիրակի էսքիզներ» և **«Շիրակի էսքիզներ-2»**

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում ներկայացվել է «Շիրակի էսքիզներ» պարային նոր հեռուստանախագիծը, որը տարածաշրջանում նման ձևաչափի առաջին հեռուստանախագիծն է: Մրցութային առաջին եթերաշրջանում եթերից ելույթ ունեցան Շիրակի պարարվեստի նվիրյալները՝ վարպետներից մինչև պատանի պարող-պարուհիները:

Հեռուստանախագծի հաջողությունը խթան հանդիսացավ ամիսներ անց ձեռնամուխ լինելու պարային հեռուստանախագծի երկրորդ եթերաշրջանի նախաձեռնությանը: Հեռուստանախագծին մասնակցեցին հանրապետության 10 շրջանի 15 պարային համույթներ:

Մանկական հաղորդումներ

«Քիդսլուք» հաղորդաշարի մասնակիցները 4-ից 8 տարեկան երեխաներն են: Հաղորդաշարի նպատակն է բացահայտել աշխարհը մանկան աչքերով: Հասարակական և քաղաքական իրադարձությունների, ազգային ավանդույթների վերաբերյալ, իրենց հատուկ մանկական անկեղծությամբ, երեխաները պատասխանում են տվյալ հաղորդման շրջանակներում ընտրված հարցերին և արտահայտում իրենց տեսակետներն ու պատկերացումները:

Երաժշտական և ժամանցային հաղորդումներ

«Իրական տուն երազելով»

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն հանդիսանալով «Իրական տուն երազելով» Տիգրան Համասյանի բարեգործական համերգ-նախագծի ինֆորմացիոն հովանավորը՝ աջակցել է համերգի նախապատրաստական աշխատանքներին և լուսաբանել գումարի հավաքագրման ընթացքը: Շիրակի հանրային հեռուստառադիոն պատրաստել է սոցիալական գովազդային հոլովակներ և շուրջ մեկ ամիս հանդիսատեսի ուշադրության կենտրոնում է պահել համերգի նախաձեռնության գաղափարը: Համերգի ուղիղ հեռարձակումը Շիրակի հանրային հեռուստաալիքով և յութուբյան կայքէջով հնարավորություն տվեց հեռուստադիտողներին և համայն հայությանը դիտել բաց երկնքի տակ տեղի ունեցած համերգը և մասնակից լինել բարեգործական նախաձեռնությանը:

«Համոզիր ինձ»

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում հեռարձակվել է «Համոզիր ինձ» նոր ժամանցային, երաժշտական, երիտասարդական հաղորդումը, որի ընթացքում հնչում են երիտասարդների սիրո խոստովանությունները: Եթերը համեմված է ժամանակակից երգիչների սիրո մասին կատարումներով:

«Կարևոր կանգառ»

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում հեռարձակվել է «Կարևոր կանգառ» նոր երաժշտական հաղորդաշարը: Հաղորդաշարի յուրաքանչյուր հաղորդում ներկայացնում է Գյումրու քաղաքապետարանի ենթակայության տակ գործող և Գյումրիում մեծ ժողովրդականություն վայելող «Դեղձանիկ» վոկալ-էստրադային համույթի

գործունեության 35 տարիներից մեկ տարվա պատմությունը: Եզրափակիչ հաղորդումը ուղիղ հեռարձակմամբ հանդիսատեսին ներկայացրեց Հայաստանի Երգի պետական թատրոնում կայացած համույթի 36-րդ տարեդարձին նվիրված համերգը:

Երաժշտական և ժամանցային այլ հաղորդումներ

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում հեռարձակվել է Գյումրի քաղաքի օրվան նվիրված «Իմ հաղթական քաղաք Գյումրի» խորագրով տոնակատարության միջոցառումը լուսաբանող հեռուստահաղորդումը: Գյումրի քաղաքի հրապարակում տեղակայված բացօթյա տաղավարում հյուրընկալվել են սիրված և ճանաչված գյումրեցիներ, ովքեր ուղիղ եթերով զրուցում էին քաղաքի պատմության, արվեստի, հաղթանակների և ապագայի մասին: Գյումրու օրվան նվիրված տոնակատարությունների լուսաբանումը շարունակվել է «Գյումրի ռոք ֆեստ» փառատոնի և տոնական Գալա-համերգի ուղիղ հեռարձակմամբ:

Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում ուղիղ հեռարձակմամբ ցուցադրվել են Գյումրու ժողովրդական գործիքների անսամբլի համերգները, Գյումրու թատերական հրապարակից «Կարին» ազգագրական պարի համույթի ելույթը:

Երաժշտական և ժամանցային հաղորդումներից Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում ներկայացվել են նաև գեղարվեստական և փաստագրական ֆիլմեր, հեռուստատեսային սերիալներ, մուլտֆիլմեր, տեսահոլովակներ, հայ և արտասահմանյան երգիչ-երգչուհիների երաժշտական և համերգային տարբեր ծրագրեր, ինչպես նաև իր մշտական տեղն է ունեցել ազգագրական երգն ու պարը:

<u>Մարզական հաղորդումներ</u>

Շիրակի հանրային հեռուստատեսության ուղիղ եթերում մշտապես հեռարձակվել են «Շիրակ» ֆուտբոլային ակումբի խաղերը:

<u>Այլ հաղորդումներ</u>

Այլ հաղորդումները ներկայացրել են գիտական, կրթական, ինչպես նաև հայոց լեզվին և պատմությանը վերաբերող նյութեր: Հեռարձակվել են երիտասարդության հարցերին առնչվող հաղորդումներ, ազատամարտիկների, անվանի մարդկանց մասին պատմող

ակնարկներ, հայ ժողովրդի պատմությանը և ազատամարտին վերաբերող հայրենական արտադրության հաղորդումներ, որոնք տրամադրվել են այլ հեռուստաընկերությունների կողմից:

Պատրաստվել և հեռարձակվել են Շիրակի մարզում ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերի գործունեությունը լուսաբանող բազմաթիվ ռեպորտաժներ:

<u>Ռադիոհաղորդումներ</u>

<u>Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներ</u>

2016 թվականին **«Օրագիծ»** լրատվական ծրագիրը աշխատանքային և շաբաթ օրերին եթեր է հեռարձակվել յուրաքանչյուր 30 րոպեն մեկ՝ 5 րոպե միջին տևողությամբ: Ծրագիրը մատուցում է օբյեկտիվ և անաչառ լրատվություն, բազմակողմանիորեն լուսաբանում օրվա ընթացքում Շիրակի մարզում և Գյումրիում տեղի ունեցած հրատապ և ուշագրավ իրադարձությունները և անդրադառնում Հայաստանում և աշխարհում կատարվող տնտեսական, քաղաքական, մշակութային ու միջազգային իրադարձություններին:

Կիրակնօրյա **«Հետագիծ»** լրատվական-վերլուծականը հեռարձակվում է օրական 12 անգամ և ներկայացնում է շաբաթվա կարևորագույն իրադարձությունները:

<u>Քաղաքական, տնտեսական և հասարակական հաղորդումներ</u>

Քաղաքական, տնտեսական և հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդումներից է **«Դիմագիծ»** հաղորդաշարը: Հաղորդաշարի նպատակն է վեր հանել քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում հասարակությանը հուզող խնդիրները և քննարկումների միջոցով առաջարկել լուծումներ:

<u>Հոգևոր-մշակութային հաղորդումներ</u>

«Վարագույրից այն կողմ» հաղորդաշարը բացահայտում է հանրահայտ մարդկանց կյանքի և գործունեության չբացահայտված և առեղծվածային էջերը, ինչպես նաև հանրությանը ներկայացնում ոչ այնքան հայտնի պատմությունները:

«Վերնատունը» գրական, երաժշտական, մշակութային հաղորդաշար է, որը անդրադառնում է հայազգի հանրահայտ գրողների, բանաստեղծների, կոմպոզիտորների, աշուղների, գուսանների և այլ ստեղծագործողների կյանքին ու գործունեությանը:

Հոգևոր հաղորդումներից է **«Դեպի տաճար»** ռադիոհաղորդաշարը, որն անդրադառնում է Հայ Առաքելական եկեղեցուն, տրվում են աստվածաշնչյան մեկնություններ, ինչպես նաև անդրադարձ է կատարվում եկեղեցական տոնացույցին:

Մանկական հաղորդումներ

«Բարի գիշեր» հաղորդաշարը ամենափոքրիկների համար է: Նրանց համար ամեն օր ռադիոեթերից հնչում են տարբեր հեքիաթներ:

Երաժշտական և ժամանցային հաղորդումներ

«Շիրակի առավոտը միասին» հաղորդաշարը ժամանցային ամենօրյա ծրագիր է, որը ռադիոունկնդրին է ներկայացնում աշխարհում և շոու-բիզնեսում կատարվող հետաքրքիր և զվարճալի նորություններ, տարբեր ժանրերից երաժշտություն, հայ և արտասահմանյան գրականությունից մեջբերումներ, ինչպես նաև նախաճաշի նոր բաղադրատոմսեր:

«Աստղային պատմություններ» հաղորդաշարը ռադիոունկնդրին ծանոթացնում է համաշխարհային հռչակ ունեցող երգիչ-երգչուհիների, կատարողների կյանքին, երաժշտախմբերի ստեղծման պատմությանը, ստեղծագործական գործունեությանը:

«Մինչ կեսգիշեր» հաղորդաշարը ամենօրյա զվարճալի հաղորդաշար է, որը հագեցված է բազմաբնույթ խաղերով, վիկտորինաներով, զվարճալի պատմություններով:

Ռադիոյի եթերում մշտապես հնչել է հայկական, ռուսական և արտասահմանյան բարձրաճաշակ երաժշտություն:

Այլ հաղորդումներ

Այլ հաղորդումները ներկայացրել են ասմունք, հոգևոր-կրթական, ուսուցողական, տոներին նվիրված նյութեր և այլն:

Հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակում

2016 թվականի ընթացքում Շիրակի հանրային հեռուստառադիոյի հեռուստահաղորդումները հեռարձակվել են միջինում օրական 17 ժամ 50 րոպե տևողությամբ Գյումրի քաղաքում և հարակից տարածքներում՝ դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով, և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով: Ռադիոհաղորդումները հեռարձակվել են օրական 24 ժամ տևողությամբ Գյումրի քաղաքում FM տիրույթում՝ 102.5 ՄՀց հաճախականությամբ: Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Շիրակի հանրային հեռուստառադիոն 2016 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից, հովանավորչությունից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման, ինչպես նաև տեխնիկական վերազինման աշխատանքների ֆինանսավորման նպատակով Շիրակի հանրային հեռուստառադիոյին «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 08.03.01.04 «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով հատկացվել է 94 646.3 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից 2016 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 13

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	ՀՀ պետական բյուջեի ընթացիկ դրամաշնորհից եկամուտ	94 646
2	Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	4 255
3	Առևտրային եկամուտներ, այդ թվում՝	11 442
3.1	*Առևտրային գովազդից եկամուտ*	*1 169*
3.2	*Վճարովի եթերաժամանակից եկամուտ*	*9 881*
3.3	*Հովանավորչությունից եկամուտ*	*392*
4	Այլ եկամուտ	568
Ընդամենը		**110 911**

Աղյուսակ 13-ի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված կապիտալ դրամաշնորհների միջոցներով ձեռք բերված ակտիվների գծով եկամուտները:

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Շիրակի հանրային հեռուստառադիոյի 2016 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 14

2016 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	62 166
2	Հեռուստառադիոհաղորդումների արտադրության ծախսեր	11 961
3	Հեռարձակման ծախսեր	7 382
4	Մաշվածք և ամորտիզացիա	10 650
5	Այլ ծախսեր	16 177
Ընդամենը		**108 336**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 57.4%-ը և ներառել է հաստիքային աշխատակիցների աշխատանքի վարձատրության ծախսերը:

Հեռուստառադիոհաղորդումների արտադրության ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 11.0%-ը և ներառել են հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատանքի վարձատրության, տաղավարի ձևավորման և հեռուստառադիոհաղորդումների արտադրության այլ ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 6.8% և ներառել են Շիրակի մարզում հեռուստահաղորդումների և Գյումրի քաղաքում ռադիոհաղորդումների հեռարձակման ծախսերը:

Հիմնական միջոցների մաշվածքի գծով ծախսը կազմել է ընդհանուր ծախսերի 9.8% -ը, իսկ այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 14.9%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների ու նյութերի, արտադրական նյութերի ու պահեստամասերի, լրատվության ու այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական ու ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, շենքերի ու շինությունների պահպանման, կապի ու կոմունալ ծառայությունների ձեռքբերման, տրանսպորտի և տեխնիկայի վարձակալություն, աուդիտի, գործուղման և ներկայացուցչական ծախսերը, հարկերն ու տուրքերը (ներառյալ շահութահարկի գծով ծախսը), ինչպես նաև ֆինանսական և այլ ծախսերը:

2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթը կազմել է 2 575.0 հազ. դրամ:

2016 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարվել 23 763.0 հազ. դրամ:

2015 թվականի գործունեության արդյունքներով Շիրակի հանրային հեռուստառադիոն ՀՀ պետական բյուջե է վճարել 1 191.5 հազ. դրամ շահութաբաժին:

2016 թվականին ձեռք են բերվել 2 580.5 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ համակարգչային և հեռուստատեսային տեխնիկա և այլ հիմնական միջոցներ:

8. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ

2016 թվականին «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲ ընկերությունը շարունակել է ուսումնասիրել Հանրային հեռուստառադիոընկերության եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը: Այդ նպատակով 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը իրականացրել է Հանրային հեռուստատեսության և Հանրային ռադիոյի լսարանի ընկալումների, պատկերացումների, ակնկալիքների վերաբերյալ թվով 12 հետազոտություններ: Հետազոտությունների արդյունքների հիման վրա իրականացվել են ծրագրային քաղաքականության և Հանրային հեռուստատեսության Առաջին և միջազգային ալիքների և Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերացանկերի փոփոխություններ՝ համապատասխանեցնելով հանրության պահանջմունքներին: Հետազոտությունները նաև հիմք են հանդիսացել Հանրային հեռուստառադիոընկերության 2016-2017 թվականների գործունեության պլանավորման համար:

Իրականացված հետազոտությունների մանրամասներն են՝

– «Հայկական հեռուստատեսությունների վերաբերյալ իրականացված հետազոտությունների արդյունքների երկրորդային վերլուծություն. եթերացանցի հետագա փոփոխությունների կանխատեսում» հետազոտությունը նպատակ է ունեցել դուրս բերելու 2016 թվականին Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի դիտելիության և Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» ռադիոալիքի լսելիության տվյալների դինամիկան՝ 2015 թվականին իրականացված հետազոտությունների արդյունքների համեմատ:

– «Հանրային ռադիոյի հաղորդացանցի բովանդակային վերլուծություն» հետազոտությունը նպատակ է ունեցել ուսումնասիրելու և պարզելու, թե որքանով է Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը իր հաղորդացանցով լուսաբանում հանրային, մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական ոլորտների հետ կապված հիմնախնդիրները:

– «Հեռուստատեսային նախընտրությունների բացահայտում՝ ըստ հեռուստադիտողների տիպականացման» սոցիոլոգիական հետազոտությունը նպատակ է ունեցել պարզելու Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի թիրախային լսարանը՝ ըստ

հեռուստատեսային նախընտրությունների: Հետազոտության արդյունքում առանձնացվել են հեռուստադիտողների սոցիալ-հոգեբանական և ժողովրդագրական հիմնական տիպերը՝ ըստ իրենց հեռուստանախընտրությունների:

– «Հանրային ռադիոյի լսարանի տիպականացում. թիրախային խմբերի նախասիրությունների դուրսբերում» հետազոտությունը նպատակ է ունեցել պարզելու Հանրային ռադիոյի թիրախային լսարանը՝ ըստ ռադիոլսողների տիպերի:

– «Երևան քաղաքի մեդիադաշտի ուսումնասիրում՝ ըստ քանակական և որակական չափորոշիչների» հետազոտությունը նպատակ է ունեցել ուսումնասիրելու Երևան քաղաքի մեդիադաշտը՝ համեմատության մեջ դնելով առկա մեդիաների ակտուալությունը ինչպես քանակական, այնպես էլ որակական չափորոշիչներով: Հետազոտության արդյունքում կազմվել է Երևանի մեդիաքարտեզ, որը ներառում է տեղեկատվության բոլոր աղբյուրների (հեռուստատեսություն, համացանց, ռադիո, թերթեր) կիրառության ամբողջական պատկերը:

– «Առցանց մեդիադաշտի վերաբերյալ հասարակական ընկալումների ուսումնասիրություն, կարիքների և նախընտրությունների չափում» հետազոտությունը նպատակ է ունեցել ուսումնասիրելու հասարակության վերաբերմունքը առցանց մեդիադաշտին, գնահատելու հեռուստատեսությունների կողմից ներկայումս կիրառվող թիրախային ռազմավարությունների արդյունավետությունը՝ առցանց լրատվամիջոցների համեմատությամբ: Առցանց մեդիայի և հեռուստատեսության համեմատության կոնտեքստում դուրս են բերվել վերջիններիս առավելություններն ու թերությունները միմյանց նկատմամբ:

– «Հայկական մեդիադաշտի համեմատական ուսումնասիրում» սոցիոլոգիական հետազոտությունը նպատակ է ունեցել բացահայտելու և համեմատելու հայկական ԶԼՄ-ների հիմնական տարբերությունները հասարակության տեսանկյունից: Մասնավորապես՝ դիտարկվել են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոյի մրցակից հայկական ալիքները՝ եթերային քաղաքականության բարելավման նպատակով:

– «Արբանյակային հեռուստատեսությունը՝ որպես սփյուռքահայերի մոտ ՀՀ վերաբերյալ պատկերացումների ձևավորման աղբյուր» սոցիոլոգիական հետազոտությունը նպատակ է ունեցել պարզելու սփյուռքահայերի վերաբերմունքը հայկական արբանյակային հեռուստատեսության վերաբերյալ, ինչը հնարավորություն է տվել հասկանալու, թե որքանով է սփյուռքահայերի շրջանում Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքը

ընկալվում որպես Հայաստանի և Սփյուռքի մասին ամբողջական տեղեկատվություն տարածող հեռուստաալիք:

– «Հեռուստատեսությունը՝ որպես կառավարության գործունեության հանրային վերահսկողության գործիք» սոցիոլոգիական հետազոտությունը նպատակ է ունեցել ուսումնասիրելու հասարակության ընկալումները և պատկերացումները կառավարության գործունեության հանրային վերահսկողության գործում հանրային հեռուստատեսության դերի վերաբերյալ:

– «Հայկական Սփյուռքին միտված ծրագրերի նպատակայնության գնահատում՝ ըստ «պետական քաղաքականություն - արբանյակային հեռուստատեսություն - Սփյուռքի իրական կարիքներ» շղթայի» հետազոտությունը նպատակ է ունեցել պարզելու սփյուռքահայության գնահատականը իրենց համար իրականացվող պետական ծրագրերի արդյունավետության և նպատակայնության վերաբերյալ: Հետազոտությունը նաև գնահատել է Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի հաղորդումների բովանդակության համապատասխանությունը սփյուռքահայերի առկա կարիքներին:

– «Սփյուռքահայերի սոցիալ-մշակութային կարիքների ուսումնասիրում» հետազոտությունը անց է կացվել՝ պարզելու համար սփյուռքահայերի սոցիալ-մշակութային կարիքները՝ նպատակ ունենալով առկա կարիքների և հիմնախնդիրների հիման վրա ապահովելու Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի՝ հայկական սփյուռքի համար հեռարձակվող հաղորդումների կրթական գործառույթի իրականացումը:

– «Հեռուստատեսության դերը քաղաքական կուսակցությունների գործունեության լուսաբանման և հասարակական համերաշխության ձևավորման գործընթացում» հետազոտությունը նպատակ է ունեցել դուրս բերելու հեռուստատեսության՝ որպես առաջնային տեղեկատվական աղբյուրի դերը քաղաքական կուսակցությունների գործունեության լուսաբանման հարցում, ինչպես նաև Առաջին ալիքից հասարակության ակնկալիքները նշված հարթակում:

2016 թվականին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից պատրաստվել և Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերով հեռարձակվել է «Հարթակ» ռադիոհաղորդաշարը: Հաղորդաշարի նպատակն է հնչեցնել հանրության կարծիքն ու փորձագետների տեսակետները հանրությանը հուզող բազմաթիվ

հարցերի շուրջ: Ռադիոհաղորդաշարի շրջանակներում ներկայացվող թեմաների վերաբերյալ իրականացվել են ընդհանուր առմամբ 15 սոցիոլոգիական հետազոտություններ, որոնք անդրադարձել են հասարակությանը հուզող հարցերին և հիմնախնդիրներին: Հետազոտությունների հիման վրա կատարվել են վերլուծություններ և արդյունքները հասանելի են դարձել հասարակության լայն զանգվածներին: 2016 թվականին պատրաստվել է 49 ռադիոհաղորդում, որոնք շաբաթական մեկ անգամ հեռարձակվել են Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերով՝ 25-30 րոպե տևողությամբ:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնն իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Սոցիոլոգիական հարցումներ կատարելու նպատակով Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնին «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.06 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրով հատկացվել է 44 326.2 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից 2016 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 15

2016 թվականին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից ստացված եկամուտները՝ ըստ ստացման աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակ	Գումար
1	ՀՀ պետական բյուջեի դրամաշնորհներից եկամուտ (ներառյալ ակտիվներին վերաբերող շնորհներ)	44 700
2	Այլ եկամուտներ, այդ թվում՝	1 855
Ընդամենը		**46 555**

2016 թվականին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է իր կանոնադրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի 2016 թվականի գործունեության ընթացքում կատարած ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 16

2016 թվականին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղություններ	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	42 441
2	Այլ ծախսեր	4 195
Ընդամենը		**46 636**

«Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ» ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 91.0%-ը և ներառել է հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 9.0%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների, տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման, տարածքի վարձակալության, կապի, ներկայացուցչական, գործուղման, հիմնական միջոցների մաշվածքի, շրջանառության հարկի, և այլ ծախսերը:

2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում զուտ վնասը կազմել է 81.0 հազ. դրամ:

2016 թվականի գործունեության ընթացքում հարկերի տեսքով ՀՀ պետական բյուջե է վճարվել 11 647.2 հազ. դրամ:

2015 թվականի գործունեության արդյունքներով Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը ՀՀ պետական բյուջե է վճարել 405.0 հազ. դրամ շահութաբաժին:

9. «Մասս մեդիա» կրթական կենտրոն

2016 թվականին Հանրային հեռուստաընկերությունը և Հանրային ռադիոընկերությունը միասին ապահովել են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի՝ Երևանի պետական համալսարանի հետ համատեղ ստեղծած «Մասս մեդիա» կրթական կենտրոնի բնականոն գործունեությունը: Կրթական կենտրոնի նպատակն է մեդիաարտադրության ոլորտի բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող կադրերի շարունակական որակավորումը, որն էլ հետագայում կնպաստի Հանրային հեռուստառադիոընկերության ենթակայության տակ գտնվող ընկերություններում սահուն սերնդափոխությանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՋԱՂԻՆՅԱՆ